Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ՀՆԳԱՄԵԱՅ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## Սանասարեան Վարժարանի

## 1901-1906

33976

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան

1908

# ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՔ
# ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
## 31 ՕԳՈՍՏՈՍ 1906

## ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ Կ. ՊՈԼՍՈՅ

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Տ. Մաղաքիա Ս. Արք. Օրմանեան, (Պատրիարք Կ. Պոլսոյ)
Նախանդամ. — Գաբրիէլ էֆ. Նորատունկեան
Գանձապետ. — Արշակ » Գարակէօզեան

Անդամք:
Գէորգ » Այանեան
Գրիգոր » Կիւմշկերտան
Միհրան » Մուրատեան
Վահան » Լսաեան

Փոխ. Անդամք:
Հրանտ » Ասատուր
Տիրան » Կիւմշկերտան

## ՏԵՂԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ Ի ԿԱՐԻՆ

Նախագահ. — Տ. Ներսէս Ա. Քհն. Վահանեան (Առաջ. Փոխանորդ)
Նախանդամ. — Դանիէլ էֆ. Խարաճեան
Գանձապետ. — Բարթող » Լէփեան
Անդամ. — Զաքար » Խէրպէկեան

Փոխ Անդամք:
Յակոբ » Իչգալայեան
Մարտիրոս » Գալաֆեան

## ՏԵՍՈՒՉՔ

Գէորգ էֆ. Աքուլեան
Յովսէփ » Մատաթեան
Սարգիս » Սոլիկեան

Որք միանգամայն անդամ են տեղական Հոգաբարձութեան։

# ՀՆԳԱՄԵԱՅ ՏԵՂԵԿԱԳԻՐ

# Սանասարեան Վարժարանի

# 1901-1906

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հոգելոյս Մկրտիչ Սանասարեանի Կարնոյ մէջ հիմնած վարժարանը 1906ին բոլորեց իր առաջին քսանեւհինգ ամեայ շրջանը։

Վարժարանին քսան տարուան (1881—1901) տեղեկագիրը 1903ին տպուած ըլլալով, հրատարակութեան կը տրուի նաեւ ներկայ Հնգամեայ Տեղեկագիրը որուն նիւթերը կը վերաբերին 1901 Սեպտ. 1էն 1906 Օգոստոս 31ի շրջանին։

Այս կերպով կ'ամբողջանան վարժարանին քսանեւհինգ տարուան (1881—1906) պատմական և վիճակագրական տեղեկութիւնները, պատկերացնելով ուսումնական և տնտեսական վիճակը Սանասարեան Հաստատութեան, որ իր հիմնադրութենէն ի վեր օգտակար հանդիսացած է երկրին, վայելելով միշտ հայրական հովանաւորութիւնն և Թանկագին շնորհները մեր Օգոստափառ Վեհապետին՝ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՀԱՄԻՏ ԽԱՆի։

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վարժարանին 1892ի Հիմնական Կանոնագրութեան համաձայն կազմակերպուած Վարչական մարմինները հետեւեալք էին այդ հնգամեայ շրջանին մէջ։

1. Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը
2. Տեղական Հոգաբարձութիւնը
3. Վերատեսչութիւնը
4. Ուսուցչական Մասնաժողովը

Որոնց աջակցած է մինչեւ 1905 Մայիս 31 Կտակակատար Պ. Կարապետ Եզեանց։

1. Կ. Պոլսոյ Խնամակալութիւն. — 1901—2ին Խնամակալութիւնը Տ. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Հօր Նախագահութեան ներքեւ կը բաղկանար հետեւեալ վեց ազգայիններէն.

Նախագահ. — Գաբրիէլ էֆ. Նորատունկեան
Գանձապետ. — Պարիկ » Կիւլպէնկեան
Անդամք:
- Աբիկ » Ունճեան
- Գէորգ » Ասլանեան
- Գրիգոր » Կիւմշկերտան
- Վահան » Խասեան

Հիմնական կանոնագրութեան 26րդ յօդուածին վրայ 1889ին եղած յաւելուածին համաձայն, 1901—2ին Օժանդակ անդամ ընտրուեցան.

Արշակ » Գարակէօզեան
Հրանտ » Ասատուր

1905ին Աբիկ էֆ. Ունճեանի յաջորդեց Արշակ էֆ. Գարակէօզեան, իսկ այս վերջնոյն Տիրան էֆ. Կիւմշկերտան։

1906ին Պարիկ էֆ. Կիւլպէնկեան Կ. Պոլէն բացակայած ըլլալով՝ անոր յաջորդեց Միհրան էֆ. Մուրատեան, իսկ Գանձապետ ընտրուեցաւ Արշակ էֆ. Գարակէօզեան։

1905 Մայիս 31ին Կտակակատար Պ. Կարապետ Եզեանց, կարճատեւ հիւանդութենէ մը յետոյ, իր մահկանացուն կնքած ըլլալով (տես



գլուխ Ս. Կարապետ Եզեանցի կեանքը), ըստ կտակի անոր տրուած իրաւասութիւնն եւս անցաւ Խնամակալութեան, որ այնուհետեւ կը վարէ վարժարանը՝ Հաստատութեան Հիմնական Կանոնագրութեան գծած պարտականութեամբ եւ իրաւասութեամբ։

Խնամակալութեան քարտուղարն է Նշան էֆ. Փափազեան, դիւանադպիր Ազգ. Պատրիարքարանի։

2. Տեղական Հոգաբարձութիւն. — 1901—2ին Նախագահութեամբ Կարնոյ առաջնորդ Տ. Զաւէն Ծ. Վրդ. Տէր Եղիայեանի կազմուած էր Հոգաբարձութիւնը հետեւեալ վեց անձերէն.

Նախագահ. — Դանիէլ էֆ. Խարաճեան
Գանձապետ. — Կարապետ » Տ. Ազարեան
Անդամք:
- Առաքել » Աւետիսեան
- Գէորգ » Արսլեան
- Յովսէփ » Մատթեան
- Սարգիս » Սողիկեան

Իսկ իբրեւ փոխ Անդամ կ'օժանդակէին Հոգաբարձութեան.

Գէորգ էֆ. Փամպուգեան
Մարտիրոս » Գաֆաֆեան
Սենեքերիմ » Վասիլեան

Շրջանի լրացմամբ, 1901—2 վարժարանական տարւոյ սկիզբը պաշտօնէ դադարեալ նկատուեցան, Առաքել էֆ. Աւետիսեան եւ իր փոխանորդը Մարտիրոս էֆ. Գաֆաֆեան։ 1902ին, ըստ օրէնի, կատարուած ընտրութեամբ, ասոնցմէ առաջինոյն յաջորդեց իր փոխանորդը, իսկ երկրորդին՝ Զաքար էֆ. Խերպէկեան։

1902—3ին Դանիէլ էֆ. Խարաճեան կը վերընտրուի, իսկ փոխանորդին՝ Գէորգ էֆ. Փամպուգեանի կը յաջորդէ Առաքել էֆ. Աւետիսեան։

1903—4ին Կարապետ էֆ. Տ. Ազարեանի կը յաջորդէ Բարթող էֆ. Լէփեան, իսկ անոր փոխանորդին՝ Սենեքերիմ էֆ. Վասիլեանի կը յաջորդէ Յակոբ էֆ. Իշգալացեան։

Նոյն շրջանին գանձապետ կ'ընտրուի Բարթող էֆ. Լէփեան։

1904 — 5ին Մարտիրոս էֆ. Գալաֆեանի կը յաջորդէ Զաքար էֆ. Խերպէկեան, իսկ ինքը կ՚ընտրուի այս վերջնոյն փոխանորդ։

1905 — 6ին Դանիէլ էֆ. Խարաճեանի կը յաջորդէ իր փոխանորդը՝ Առաքել էֆ. Աւետիսեան, իսկ ինքը կ՚ընտրուի անոր փոխանորդ։ Առաքել էֆ. Աւետիսեան 1905 Հոկտ. 16ին իր մահկանացուն կնքած ըլլալով՝ ըստ օրինի, իրեն կը յաջորդէ իր փոխանորդը։

Հոգաբարձութեան Նախագահ Տ. Զաւէն Ծ. Վրդ. Կարնոյ Առաջնորդութենէն հրաժարած ըլլալով՝ 1906 Մարտ 29ին անոր կը յաջորդէ իր փոխանորդը՝ Տ. Ներսէս Քհնյ. Վահանեան։

1902 — 3ին Հոգաբարձութիւնը գործադրութեան դրաւ նոյն տարւոյ մէջ Գ. Սրուլեան էֆ.էն խմբագրուած և Հոգաբարձութենէն ընդունուած հակակշռի և ներքին մատակարարութեան վերաբերեալ հրահանգները, որոնք նպաստեցին մատակարարութեան աւելի բարւոք ուղղութիւն մը տալու։

Նոյն տարին մասնաւորապէս ընտրուեցաւ Վարժարանին ընթացաւարտներէն Պ. Արամ Մուշեղեան։

1901 — 1906 տարիներու մէջ եւս Պ. Արսէն Աւետիքեան վարեց Հոգաբարձութեան քարտուղարութեան և վարժարանին հաշուապահութեան պաշտօնները։

Վարժարանին մատակարարն էր Պ. Տիգրան Բրուտեան, որուն պաշտօնը դադրեցաւ 1906 Փետր. 27 թուականին։

3. Վերատեսչութիւն. — Կտակակատար Պ. Կ. Եզեանցի 1891 Յունուար 31 թուակիր պաշտօնագրով ըրած կարգադրութեան համաձայն, Հոգելոյս-Հիմնադրին երեք սաները՝ Պ. Պ. Գէորգ Սրուլեան, Յովսէփ Մատաթեան և Սարգիս Սողիկեան, իրենց հաւաքական պատասխանատուութեան ներքեւ աշխատութեան բաժանման սկզբունքով, շարունակեցին վարել Վերատեսչութեան պաշտօնը վարժարանական սոյն հինգ տարւան մէջ եւս։

Խնամակալութիւնը 1905 — 6 տարեշրջանի մէջ հարկ դատեց ի Կարին ուղարկել՝ իբրեւ քննիչ՝ Գրիգոր էֆ. Զաքարեան, որ 1906 Մայիս 2ին Կարին հասաւ և իր պաշտօնը կատարելէ յետոյ Յունիս 24ին վերադարձաւ ի Կ. Պոլիս։



ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ

Ուսուցչական Մասնաժողով որ 1903ին կազմակերպուած էր, Պ. Ս. Սողիկեանի Ատենապետութեան ներքեւ շարունակեց իր պաշտօնը կանոնադրութեամբ գծուած պարտականութեամբ և իրաւասութեամբ:

Ուսուցչական Մասնաժողովը 1905—6 տարեշրջանի վերջերը, ի ներկայութեան Կ. Պոլսէն ուղարկուած Քննիչ՝ Գրիգոր Էֆ. Զաքարեանի, վերաքննեց վարժարանին ուսմանց ծրագիրը և խմբագրեց Ներքին Կանոնագիրը:

Պ. Ս. Աղապալեան վարեց Ուսուցչական Մասնաժողովոյ քարտուղարութեան պաշտօնը 1904 Սեպտ. 1—1906 Փետր. 3. իսկ անկէ յետոյ Պ. Լեւոն Փափազեան, որոնց կ'աջակցէր Պ. Ա. Աւետիքեան:

---

Վարժարանն 1899—1900էն սկսեալ միշտ ունեցաւ իր ամբողջ եօթը դասարանները և ամէն տարի ընթացաւարտ տուաւ:

Հնգամեայ այս շրջանի մէջ վարժարանը ամենէն շատ աշակերտ ունեցաւ 1901—2ին, յորում անոնց թիւը կը յանգէր 170ի, որոնցմէ 61ը գիշերօթիկ պաշտպանեալ: Այս վերջիններու թիւը 1904—5ին իջաւ 8ի: 1905—6ին վարժարանն այլեւս պաշտպանեալ աշակերտ չունէր:

Տնտեսական ծանօթ պատճառներու հետեւանօք գիշերօթիկ թոշակաւորներն հետզհետէ պակսեցան: Անոնց թիւն, որ 1901—2ին 31 էր, 1905—6ին 13ի իջաւ:

Ընդհակառակն ցորեկեայ թոշակաւորներու թիւն զգալապէս աւելցաւ: 1894—5ին, երբ երկրորդ անգամ ցերեկեայ թոշակաւոր ընդունելու դրութիւնը ներմուծուեցաւ, վարժարանն անոնցմէ հազիւ 12 աշակերտ ունէր. 1903—4ին այդ թիւը բարձրացաւ 77ի, իսկ վերջին (1905—6) տարուան մէջ՝ 73ի կը յանգէր, ինչ որ կը հաստատէ թէ Կարնեցին մօտէն վերահասու լինելով վարժարանին արդիւնքին, գնացած է գնահատել զայն:

Ըստ կտակի Հոգեւոյս-Հիմնադրին, Սանասարեան Վարժարանին մէջ պէտք է ուսանին առ նուազն 30 ձրիավարժներ, որոնք Սանասարեան Սան կ'անուանուին: Վարժարանը՝ որ 1901—2ին 31 գիշերօթիկ և ցերեկեայ ձրիավարժ սան ունէր, յաջորդ տարիներու մէջ, նոր զոհողութիւններ ընելով՝ ունեցած է 40—62 սան, Արհեստանոցի ընթացքին հետեւող ցերեկեայ ձրիավարժներով միասին:

Սանասարեան Վարժարանի աշակերտներուն խնամեալ և գործնական կրթութիւն մը տալու համար, Վարիչ Մարմինները միշտ ջանացած են պահել կարող Մասնագէտ-Ուսուցիչներ, որոնք չափաւոր թոշակով իրենց ամբողջ ոյժը նուիրած են միա՛յն վարժարանին։

Վարժարանին Վարչական Մարմինք ուսումնական բաժնէն զատ, զոհողութիւն ըրած և մասնաւոր խնամք տարած են նաև վարժարանին արհեստագիտական բաժնին։

1886—7 շրջանին վարժարանն ունեցած էր Կոպլարարութեան ճիւղը, որ շարունակուեցաւ մինչև 1901—2 վարժարանական տարւոյ վերջը։ Նոյն ճիւղի վարպետը մեկնած ըլլալով՝ կարելի չեղաւ անոր յաջորդ մը գտնել. այս և այլ պատճառներով փակուեցաւ Արհեստանոցի այդ ճիւղը, որ 16 տարուան ընթացքին մէջ տուաւ ընդամէնը 8 ընթացաւարտ։ Այս ճիւղը, հարկ է յաւելուլ, որ պէտք եղած ընդունելութիւնը չգտաւ։

Կղմինարէ և Թանագէ (սաճ, երկաթէ թիթեղ) առողջապահիկ վառարաններ ի Կարին ներմուծուած են՝ Արհեստանոցի կոպլարարութեան ճիւղին շնորհիւ։

1887—8 ին բացուած Արհեստանոցի Կահագործութեան ճիւղը շարունակուեցաւ մինչև 1905—6 տարեշրջանի վերջը։ Այդ ճիւղէն ընթացաւարտ եղան 20 հոգի։

Կարնոյ մէջ կահագործութեան ընդհանրացման և զարգացման նպաստած է նաև Սանասարեան Վարժարանը։

1901—2 ին վարժարանն ունեցաւ նաև Տպագրական ճիւղ մը, որ դժբախտաբար շատ կարճատև կեանք մ'ունեցաւ, վասն զի այդ ճիւղին համար յատկապէս Եւրոպայի մէջ պատրաստել տրուած Սան-Ուսուցիչը մեկնեցաւ 1902—3 տարեշրջանի վերջը։

Աշակերտներէն ոմանք 1901—1906 տարիներու մէջ եւս առեն առեն զբաղեցան կազմարարութեամբ և կազմեցին դասատետրեր և հին դասագրքեր։

Տեղեկագրիս շրջանին մէջ, ընդհանուր աշակերտաց առողջական վիճակը շատ գոհացուցիչ եղած է։ Քիչ հիւանդութիւններ պատահած են՝ շնորհիւ Կարնոյ մաքուր օդին ու ջրին, շրջագայութեանց, ամառնային օդափոխութեան և առողջապահիկ այլ կարգադրութեանց։

Դասերու ընդհատում եղած է միայն 1901 Հոկտ. 26—Նոյեմ. 26 Կարնոյ հանրածանօթ երկրաշարժի ցնցումներուն պատճառաւ։



1905—6 շրջանի տարեկան քննութիւններն՝ Խնամակալութեան տնօրինութեամբ՝ սովորականէն մէկ ամիս առաջ տեղի ունեցած ըլլալով, արձակուրդը փոխանակ 2ի, 3 ամիս տևած է։

Աշակերտներուն արձակուրդ տրուեցաւ. իսկ ուսուցիչներն, ի ներկայութեան քննիչ Գրիգոր էֆ. Զաքարեանի, Յունիս ամսոյ մէջ, զբաղեցան Ներքին Կանոնագրի պատրաստութեամբ և ուսմանց ծրագրի վերաքննութեամբ։

1901 Սեպտ. 1—1906 Օգոստոս 31 Վարժարանին ընդհանուր ծախքն եղած է Լ. Օ. 103 էն 1,714,874 1/4 ղրշ. որուն 1,026,930 3/4 ղրշ.ը Հոգելոյս Հիմնադրին կտակած դրամագլխին հասոյթներէն, իսկ մնացեալ գումարը՝ 687,943 1/2 ղրշ. աշակերտներուն վճարած թոշակներէն և այլ տուրքերէն, Արհեստանոցին եկամուտներէն և ուրիշ զանազան հասոյթներէ։

Աչքի առջև ունենալով վերջին այդ հինգ տարուան ծախքերը կը տեսնուի որ հետզհետէ նուազած են անոնք։ Ծախուց նուազման մեծապէս նպաստած է նաև ծրագրուած Հակակշռի և Ներքին Մատակարարութեան յատուկ հրահանգներու կէտ առ կէտ գործադրութիւնը։

Ամենէն շատ ծախք եղած է 1901—2 տարեշրջանին՝ երկրաշարժի, վարժարանական նոր շինութեանց, և վարժարանին տեղափոխութեան խնդրոյ համար ի Խարբերդ կատարուած քննութեան հետևանօք։

Վարիչ Մարմիններն ի նկատ առնելով Կարնոյ ցուրտ կլիման, բոլոր ոյժով ջանացած են Սանասարեան սաներուն տալ սննդարար (առաւելապէս մսեղէն, իւղեղէն) ուտեստ և տաք պահող հագուստ, և հոգ տարած են որ աշակերտներուն յատկացուած տարեկան ծախքի գումարը, կարելի եղածին չափ խնայողական ըլլալով հանդերձ, զանոնք չզրկէ կարևորէն։

| | Լ. Օ. 103 էն | |
|---|---|---|
| Վարժարանը 20 տարուան մէջ ծախսած է . . . | 7,131,701.09 | ղրուշ |
| Վերջին այդ 5 » » » » . . . | 1,714,874.25 | » |
| Քառորդ դարու մէջ ծախսած է . . . . . . . . | 8,846,575.34 | » |

Ի՞նչ եղած է այս ծախքին փոխարէն յառաջ բերուած արդիւնքը։ — Քառորդ դարու մէջ վարժարան ընդունուած են ընդամէնը 678 (*) հոգի, որոնցմէ 393ը թոշակաւոր, 285ը ձրիավարժ։

(*) Ասոնցմէ 423ը գիշերօթիկ, իսկ 255ը ցերեկեայ:

Ասոնցմէ ուսումնական բաժնի հետեւած են . . . . . . . 525 հոգի
Ուսումն. բաժնի ինչ ինչ տարիներուն եւ արհեստի . 400 »
Եւ մի՛միայն արհեստի . . . . . . . . . . . . . . . . . . . . 53 »
Համագումար . . . . . . . . . . . . 678 »

Վարժարանը ձրիավարժներուն՝ ուսման հետ՝ տուած է նաեւ սնունդ եւ հագուստ, տարիներով պատսպարած ու խնամած է որբ ու չքաւոր տղեկներ, անոք ու թշուառ պատանիներ: Բոլոր աշակերտաց (թոշակաւոր թէ ձրիավարժ, գիշերօթիկ թէ ցերեկեայ) վարժարանէն կը տրուի ցերեկուան ճաշը:

Ծախուց յաւելման նպաստող այս կարեւոր ծանօթութիւնները տալէ յետոյ, կուգանք պատասխանել վերի հարցման:

Վարժարանին բացումէն մինչեւ 1906 Օգոստոս 31 թուականը, աւանց վարժարանին ընթացքն աւարտելու, մեկնած են անկէ 376 հոգի, որոնցմէ ոմանք կը հետեւին հիմա բարձրագոյն վարժարաններու եւ համալսարաններու այս կամ այն ճիւղի ընթացքին, ոմանք ուսուցչութեամբ կը զբաղին գիւղերու եւ քաղաքներու մէջ. շատեր՝ արհեստով կամ առուտուրով. կա՛ն այնպիսիներ, որ արդէն բժիշկ կամ դեղագործ եւ կամ պաշտօնեայ (Րէժիի, Երկաթուղւոյ, եւն.ի մէջ) են: Ոմանք ալ հողագործի սկսած կնքած են իրենց մահկանացուն:

Վարժարանը մինչեւ 1905—6 տարեշրջանի վերջն ընծայած է նաեւ 189 ընթացաւարտ՝ ընդհանուր կրթութեան բազմակողմանի պաշարով: Անոնցմէ 161 ը Ուսումնական բաժինէն, 28 ը՛ Արհեստագիտականէն:

Վարժարանին ընթացաւարտներուն 1906 Օգոստոս 31 ի վիճակը կարելի էր դասաւորել հետեւեալ ցուցակին համեմատ.—



# ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

## ԸՆԹԱՑԱՒԱՐՏՆԵՐՈՒ ՎԻՃԱԿԸ 1906 ՕԳՈՍՏՈՍ 31 ԻՆ

Տեսուչ, ուսուցիչ՝ Սանասարեան եւ այլ վարժարաններու մէջ. . . . . 59
Առուտուրով զբաղող՝ վաճառական սեղանաւոր, յանձնակատար են. . 42
Արհեստաւոր՝ կահագործ, կօշկակար, մանիսայագործ են. . . . . . 23
Պաշտօնեայ՝ Կառավարութեան, Ռէժիի, Երկաթուղւոյ, Առաջնորդարանի, վաճառատան են. . . . . . . . . . . . . . . . . . . 22
Բժիշկ, երկրաչափ, ատամնաբոյժ, մեքենագէտ, տարրալոյծ եւն. . 16
Ուսանող՝ Համալսարանի կամ բարձր. վարժարաններու մէջ. . . . . . 12
Մեռած՝ (Նախապէս ուսուցիչ, վճռկն. պաշտօնեայ են.) . . . . . . 9
Զբաղումնին մեզ անծանօթ՝ (Ինչպէս եւ իրենց ո՞ւր գտնուիլը). . . 5
Կրօնաւոր՝ . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 1
Համագումար ընթացաւարտներու. . . . . . . 189

Որոնցմէ 161 ը Ուսումնական բաժնէն, իսկ 28 ը Արհեստագիտականէն.

Ինչպէս կը տեսնուի ցուցակէն, վարժարանի ընթացաւարտներուն աւելի քան 1/3 ը ուսուցչական պաշտօն կը վարէ, ինչ որ Հոգեւոյս-Հիմնադրին մտաւոր մէկ փափաքին կը համապատասխանէ եւ կը լրացնէ մերազնէից կարեւոր մէկ պէտքը: Զանազան գաւառներէ Տեսչութեան ուղղուած պաշտօնական գրութիւններով գոհունակութիւն յայտնուած է Սանասարեանի ընթացաւարտներուն ուսուցչական բարոյք, խղճամիտ եւ արդիւնաւէտ պաշտօնավարութեանց մասին:

Վարժարանին նախկին սաները գործնական կեանքի մէջ ալ հասարակ յաջողած են եւ պարծանք եղած իրենց Մայր Հաստատութեան:

* * *

Տեղեկագրիս մէջ յատուկ գլուխներով մանրամասնօրէն տրուած են այն կարեւոր ծանօթութիւնները, որոնք կը վերաբերին Լուսահոգի Կտակատար Կ. Եղեանցի կեանքին, վարժարանին ծրագրին, շէնքերուն, ու-

տուցիչներուն, աշակերտներուն, արհեստանոցին, վարժարանի ներքին կեանքին, քննութիւններուն, ուսումնական միջոցներուն, հասոյթի աղբիւրներուն ու ծախքերուն, վարժարանին կալուածոց, վարժապետներու պատրաստութեան, նուիրատուներուն և նուէրներուն, ինչպէս նաև աւանդդրամոց։ Ուր որ պէտք տեսնուած է, դրուած են ցուցակներ, որոնք մէկ ակնարկով կը պատկերացնեն վարժարանին վերջին 5 տարուան վիճակը զանազան տեսակէտներով։

# Ա.

# ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑԻ ԿԵԱՆՔԸ

Սանասարեան Վարժարանի Հոգելոյս-Հիմնադրին Կտակակատար՝ Պ. Կարապետ Եզեանց, որ իր իմաստուն խորհուրդներով ու թելադրութիւններով, ներշնչած էր Լուսահոգի Մկրտիչ Սանասարեանին հիմնել այս կարեւոր հաստատութիւնը, 1905 Մայիս 31 ին կնքած ըլլալով իր մահկանացու կեանքը, արժան կը համարուի հոս ամփոփել մեծանուն Կտակակատարին կեանքը։

Կարապետ Եզեանց ծնած էր 1835 Սեպտ. 5 ին, ի Մոսկուա։ Զաւակն էր միջին դասակարգի վերաբերող Յարութիւն Եզեանցի, որ Պետական համեստ պաշտօնեայ մ'եղած էր։ Ունէր երկու քոյր՝ Մարիամ և Աննա անուններով. անոնցմէ առաջինն ամուսնացած էր Բօղդան Բօղդանեանի հետ և ունեցած 3 մանչ և 3 աղջիկ զաւակներ, որոնք կ'ապրին տակաւին, իսկ ինքը՝ Մարիամ և իր ամուսինը մեռած են արդէն։ Աննա չէր ամուսնացած. նա եւս մեռած է ասկէ իբր 4 տարի առաջ։ Կ. Եզեանց միակ եղբայր մ'ունէր՝ Պ. Յովհաննէս անունով, բժշկապետ, գեներալի աստիճանաւ։

Կ. Եզեանց որ ուսումն առած էր Մոսկուայի Լազարեան ճեմարանը։ 19 տարեկան հասակին մէջ պաշտօնի կոչուեցաւ Ռուսիոյ Ներքին գործոց Նախարարութեան մէջ։

Բեդերպուրկի համալսարանին մէջ քննութիւն տալով կ'առնայ «Արեւելեան Լեզուաց Մագիստրոս»ի ակադեմական տիտղոսը։

Քիչ յետոյ, Ներքին գործոց նախարարութենէն անցաւ Կրթական Նախարարութեան մէջ, ուր զանազան պաշտօններ վարելէ յետոյ, եղաւ նախ Փոխ-Տնօրէն և ապա Կրթական Բարձրագոյն Ժողովոյ անդամ. պաշտօն՝ զոր վարեց մինչեւ մահուան օրը՝ Արտաքին գործոց Նախարարութեան մէջ ունեցած Աւագ Թարգմանի պաշտօնին հետ։

1904 Նոյ. 6 ին լրացուց իր Պետական բարուոք ծառայութեան յիսնամեակը։ Վեհ. Զարը՝ Նիքոլա Բ. այդ առթիւ անոր շնորհեց «Իսկական Գաղտնի Պետական Խորհրդական» կոչուած ռուսական ամենաբարձր աստիճանը, զոր ամբողջ Ռուսահայերուն մէջ ինք միայն ունէր։

Սիրելի էր հաւասարապէս ամենուն։ Ճշդապահ էր և իր իսկ անձին դէմ խիստ. ուղղամիտ և հաւատարիմ, շրջահայեաց և խոհեմ. բնաւորութեամբ թէև լուրջ, բայց ընկերութեան մէջ զուարթախօս. սրամիտ խօսքերով նշանաւոր, սիրալիր և հոգածու առ ստորադասեալս և միանգամայն անաչառ և խիստ՝ անոնց նկատմամբ։ Նախանձախնդիր էր պաշտպանած եկեղեցւոյ շահերուն և աւանդութիւններուն, աշխատող ուսանողաց մտաւորական և բարոյական զարգացման։

Անկէ՝ ներշնչուելով բարեգործութիւններ ըրին Յովսէփ Իզմիրեանց, Մկրտիչ Սանասարեանց, Մարիամ Կաղաչկեանց, Առաքել Ծատուրեանց, Մարգար Պապոլեանց, Աւետիք Ղուկասեան և այլ Ռուսահայ բարերարներ։

Ի՛նքն եղաւ բացման թելադիր Տփղիսի Յովհաննեան աղջկանց Կրթարանին և Նախիջեւանի Գուքոյեան հաստատութեան։

Իր ներշնչած անսահման վստահութեան շնորհիւ, կտակակատար կարգուած էր Յովսէփ Իզմիրեանցէն, Մկրտիչ Սանասարեանցէն, Մարիամ Կաղաչկեանցէն և ուրիշ կտակարարներէ։

Մ. Սանասարեան եթէ իր դրամով մարմնաւորեց համանուն հաստատութիւնը, Կ. Եզեանց՝ իր իմաստուն խորհուրդներով՝ անոր հոգին եղաւ, և կը սիրէր զայն այնպէս, ինչպէս հայր մը, որ կը գուրգուրայ իր զաւկին վրայ։

Եզեանց ակներեւ գործունէութիւն մը ցոյց տուած է նաեւ Բեդերսպուրկի հայ եկեղեցւոյ կալուածոց վարչութեան մէջ. առաջնորդած է ուսանողներուն և դիւրացուցած է խոստմնալից երիտասարդներուն ի համալսարան մուտքը՝ շատ անգամ իր անձնականէն նպաստելով անոնց։

Նշանաւոր պատմագէտ մ՚էր և հեղինակած է ազգագրական և պատմական կարեւոր գործեր։

Իբրեւ արեւելագէտ, Ռուս Կառավարութեան կողմէ, ի պաշտօնէ ներկայ գտնուած է Արեւելագիտաց Համաժողովներուն։

1886 Սեպտ. 5ին կ՚այցելէ Կարին, Սանասարեան Վարժարանը, կը քննէ աշակերտները և գոհ կը մնայ. կ՚զբաղի նոյն վարժարանին վերաբերեալ կրթական և կալուածական խնդիրներով և նոյն ամսոյ 25ին կը մեկնի դէպ ի Բեդերսպուրկ՝ Կ. Պոլսոյ գծով։

Կարնոյ Կարմիր-Վանքի որբանոցը ամբողջ 5 տարի մատակարարուեցաւ Եզեանցի, իր բարեսէր քրոջ և քեռայրներու նախաձեռնութեամբ



ԿՏԱԿԱԿԱՏԱՐ Ռ. ԿԱՐԱՊԵՏ ԵԶԵԱՆՑ

հանգամանակուած նպաստներու շնորհիւ։ Քանի մը տարիներ շարունակ Պաքուցի և այլ հարուստ ազգայիններ՝ Եղեանցի գլխուն վրայ՝ Սանասարեան Վարժարանին մէջ իրենց ծախքով պահեցին կարգ մը պաշտպանեալ սաներ։

1904 ին, երբ երկրաշարժը փլացուց Կարնոյ քաղաքին, ի՛նքն էր դարձեալ որ ամենէ՛ն առաջ Առաջնորդարանին նպաստ կը հասցընէր ինքնաբերաբար։

Քանիցս այցելած է ի Կ. Պոլիս՝ Սանասարեան Վարժարանին վերաբերեալ գործոց կարգադրման համար։

Օրինական կտակով 200 հատ Տըվինսք-Վիթեպսքի երկաթուղւոյ 4% պարտատոմսեր թողուցած է իր եղբօրը, բժշկապետ Պ. Յովհաննէսին, պայմանաւ որ այս վերջնոյն մահուանէն յետոյ, այդ արժեթղթերն ամբողջովին սեպհականութիւնն ըլլան Սանասարեան Վարժարանին։

**Մահ, յուղարկաւորութիւն եւ հոգեհանգիստներ.** — Կարապետ Եղեանց խիստ կարճատեւ հիւանդութենէ մը յետոյ, 1905 Մայիս 31 ին մեռաւ ի Բեթերսպուրկ 70 տարեկան հասակին մէջ։ Մարմինը փոխադրուեցաւ ի Մոսկուա, ուր թաղուեցաւ հանդիսաւորապէս՝ իր ընտանեկան դամբարանին մէջ։

Յուղարկաւորութեան կը նախագահէր Պեսարաբիոյ Թեմին Առաջնորդ՝ Տ. Ներսէս Ս. Արքեպիսկոպոս Խուդավէրտեան։ Բազմաթիւ պսակներ դրուեցան հանգուցեալին դագաղին վրայ և դրուատալից դամբանականներ խօսուեցան։ Փաստաբան Պ. Ստեփաննոս Մամիկոնեան՝ որ կը ներկայացնէր Վարժարանը՝ պսակ դրաւ անոր դագաղին վրայ Խնամակալութեան կողմէ և յանուն Սանասարեան Հաստատութեան խօսեցաւ դամբանական մը։

Ամեն Տ. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Հայրը, իբրեւ Նախագահ Սանասարեան Վարժարանի Խնամակալութեան և Ց. Իզմիրեանց Գրական Ցանձնաժողովոյ, Եղեանցի մահուան ութօրէքին, Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ, յատկապէս Ս. Պատարագ մատուցանելէ յետոյ, հոգեհանգստեան պաշտօն կատարեց և ապա խօսեցաւ իմաստալից դամբանական-ներբողեան մը՝ ընտիր բազմութեան մը ներկայութեան։

Կարնոյ մէջ ալ Յունիս 2 ին ի նշան սգոյ կը փակուին բոլոր վարժարանները և Յունիս 5 ին, կիւրակէ օր, նոյն ատենուան Առաջնորդ՝ Տ. Զաւէն Ծ. Վրդ. Տ. Եղիայեան յատկապէս Ս. Պատարագ կը մատուցանէ, հոգեհանգստեան պաշտօն կը կատարէ և կը խօսի ներբողական դամբանական մը։



33976

Մահարեմի մը վրայ նոյն օրը կը դրուին 12 պսակներ Կարնոյ Թաղ. Խորհրդոյ, Աղքատաց Խնամակալութեան, Վարժարանին Հոգաբարձութեան, Տեսչութեան, Ուսուցիչներուն, Կարներնակ ընթացաւարտներուն, աշակերտաց և այլոց կողմանէ և ցաւակցական այցելութիւններ կընդունուին Վարժարանին մէջ։

Հոգեհանգստեան պաշտօններ կատարուեցան նաև Բեդերպուրկի, Մոսկուայի, Բարիզի, Տփղիսի, Սեբաստիոյ և Բաթէմանի մէջ։



# Բ.

# ԾՐԱԳԻՐ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Սանասարեան Վարժարանի նպատակն է դաստիարակել հայ մանուկները Հայ. Առաքել. Ս. Եկեղեցւոյ ոգւոյն և կանոնաց համաձայն, աւանդել անոնց ընդհանուր ուսումն և կրթութիւն, և կրթել զանոնք արհեստներու և արուեստագիտութեան մէջ (տե՛ս Հիմնական կանոնք Սանասարեան Վարժարանի Յօդ. 3րդ)։

Վարժարանն ըստ այսմ ունի.—

1. Ուսումնական Բաժին
2. Արհեստագիտական Բաժին

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Ըստ ծրագրի, Սանասարեան Վարժարանը մտնել ուզող աշակերտները պէտք է գիտնան Հայերէն վարժ կարդալ, ընթեռնլի կերպով գրել, Քերականութեան «մասունք բանի»ն որոշել, թելադրութիւն մը գրի առնել՝ առանց ուղղագրական խոշոր սխալներու՝ և թուաբանութեան չորս գործողութիւնները վարժ կերպով կատարել:

Վարժարանն՝ որ կը համապատասխանէ Գերմանական « Realschule » կոչուած միջնակարգ վարժարաններուն, ունի Պատրաստական կարգ մը և Ա. Բ. Գ. Դ. Ե. և Զ. դասարաններն (եօթնամեայ ընթացք)։

Աւանդուած ուսումներն են.—

Կրօն.
Եկեղեցական Պատմութիւն.
Աշխարհաբար Հայերէն.
Գրաբար Հայերէն.
Օսմաներէն եւ Օսմ. Օրէնսգիտութիւն.
Ֆրանսերէն
Գերմաներէն.
Պատմութիւն (Տոհմ. Օսմ. եւ Ընդհ.).

Աշխարհագրութիւն (Բնկն. Քղքն. Անտեսկն. եւ Ուսումնկն.).

Ուսողութիւն (Թուաբանութիւն, Տոմարակալութիւն, Դրահաշիւ, Երկրաչափութիւն եւ Եռանկիւնաչափութիւն).

Բնապատմութիւն (Բուսաբանութիւն, Կենդանաբանութիւն, Մարդակազմութիւն, Երկրաբանական եւ Հանքաբանական ծանօթութիւնք).

Բնաբանութիւն.

Տարրաբանութիւն.

Գեղագրութիւն (Հայ. Թուրք. Ֆրնս.).

Գծագրութիւն.

Երգ (Ձայնական).

Երգ (Գործիական, ջութակ կամ դաշնակ եւ կամ նուագախումբ. կամաւոր).

Մարմնամարզ:

1901 — 1902 ին, ըստ հրահանգի Պ. Կ. Եղեանցի, վերոյիշեալ առարկաներն աւանդուեցան դասաժամերու նոր բաշխումով մը հետեւեալ ցուցակի համաձայն։

Այս վերջինը՝ փոքր ինչ փոփոխութեամբ՝ գործադրութեան դրուած էր արդէն վարժարանական 1900 — 1901 տարեշրջանին։



# Ա.

## ԴԱՍԱՑՈՒՑԱԿ
## ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ
## 1901

| ԱՌԱՐԿԱՆԵՐ | ՊԱՏՐ. | Ա. | Բ. | Գ. | Դ. | Ե. | Զ. | ԳՈՒՄԱՐ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Կրօն | 3 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 15 |
| Հայերէն Արդի | 6 | 6 | 3 | 3 | 1 | — | — | 19 } 36 |
| » Գրաբար | — | — | 2 | 3 | 4 | 4 | 4 | 17 } |
| Օսմաներէն եւ Օսմ. Օրէնսգիտութիւն | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 4 | 28 |
| Գերմաներէն կամ Ֆրանսերէն | — | 6 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 31 |
| Եկեղեցական Պատմութիւն | — | 2 | 2 | — | — | 2 | 2 | 8 |
| Ընդհ. Պատմութիւն | — | — | 2 | 4 | 4 | 3 | 2 | 15 |
| Աշխարհագրութիւն | 3 | 2 | 2 | 2 | — | — | 2 | 11 |
| Թուաբանութիւն | 6 | 3 | 3 | 3 | 2 | — | 1 | 18 |
| Դրահաշիւ եւ Տոմարակալութիւն | — | — | — | 1 | 2 | 2 | 1 | 6 |
| Երկրաչափութիւն եւ Եռանկիւնաչափութիւն | — | — | — | — | 2 | 2 | 2 | 6 |
| Բնաբանութիւն եւ Տարրաբանութիւն | — | — | — | — | — | 3 | 3 | 6 |
| Բնական գիտութիւնք | 2 | 2 | 2 | 2 | 2 | 3 | 2 | 15 |
| Գծագրութիւն | 2 | 1 | 1 | 1 | 2 | — | — | 7 |
| Գեղագրութիւն | 3 | 2 | 2 | — | — | — | — | 7 |
| Գումար | 29 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 30 | 209 |

Վերոյիշեալ առարկաներուն մէն մի տարւոյ եւ մէն մի դասարանի մէջ քանի ժամ աւանդուած ըլլալը մանրամասնօրէն ցոյց տալու համար, պատրաստուած է հետեւեալ Բ. ցուցակը։

1906ին Կ. Պոլսոյ Խնամակալութեան կողմէ ուղարկուած քննիչ Գրիգոր էֆ. Զաքարեանի հետ Ուսուցչական Մասնաժողովը խորհրդակցելով վերաքննեց ուսմանց ծրագիրը եւ բարեփոխեց զայն։

Ըստ այդ ծրագրի աւելցան 1.— Քաղ. Տնտեսագիտութիւն. 2.— Առողջապահութիւն, որ առաջ բնապատմութեան դասին հետ կ՚աւանդուէր համառօտակի եւ 3.— Իրագիտութիւն, որ նոյնպէս Բնապատմութեան դասին մէջ կ՚աւանդուէր։

---

**Գործնական Երաժշտութիւն**.— Վարժարանին աշակերտներէն դաշնակի կամ ջութակի դասընթացքին կամաւոր կերպով հետեւողներն, իրենց կարողութեան աստիճանին համեմատ, բաժնուած էին Ա. Բ. Գ. խումբերու, որոնք իրենց յատկացուած դասաժամերէն զատ կրթութեանց համար յատուկ ժամեր եւս ունէին։

1902—3ին կազմակերպուեցաւ նաեւ նուագախումբ մը՝ առաջնորդութեամբ հարիւրապետ Ահմէտ էֆէնտիի։

Նուագածութեան դաս կը տրուէր շաբաթը 2-3 անգամ։

---

## 2. — ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Գալով Արհեստագիտական բաժնի ծրագրին այդ մասին կը խօսուի **Արհեստանոց** ընդհանուր գլուխին տակ։

## Գ.

## ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ՇԷՆՔԵՐ

Վարժարանը 1883 Մայիս 11էն ի վեր կը մնայ Կարնոյ Հայոց աղջկանց համար կառուցուած վարժարանին մէջ։ Գլխաւոր հատուածներն են «Հին եւ Նոր Շէնքերը»։

Բաց ի արդէն եղած շէնքերու փոփոխութիւնները եւ յաւելուածական շէնքերը, վարժարանին ծախքով 1901ին կառուցուեցան նաեւ նոր խոհանոց մը եւ մառան մը։ Այս շինութեանց հետեւանօք, նոր շէնքին տակը գտնուող ընդարձակ խոհանոցը վերածուեցաւ մառանի։

Նոյնպէս վարժարանին ծախքով 1905ին շինել տրուեցաւ ընդարձակ փայտնոց մը։

Կարնոյ Գաւառ. Ընդ. Ժողովը 1901 Օգոստոսին՝ ինչ ինչ նկատումներով՝ չեղեալ կ'ուզէր նկատել 1888 Նոյեմբեր 18 թուականաւ տեղւոյն Թաղ. Ժողովոյ եւ վարժարանին Տեսչութեան միջեւ փոխանակուած պայմանագիրը, եւ կը յանձնարարէր Թաղ. Ժողովոյն՝ եկեղեցապատկան այդ շէնքերուն վարձուց մասին՝ բանակցիլ նոյն վարժարանի Հոգաբարձութեան հետ։

1901 Հոկտ. 26ին Կարնոյ մէջ պատահած երկրաշարժէն կը վնասուին նաեւ վարժարանին ծախքով կառուցուած նոր շէնքն, հին շէնքին մէկ մասն, փուռը եւլն։

Այս անակնկալ աղէտը միանալով պայմանագրի ջնջման եւ այլ պարագաներու հետ, պատճառ եղան դարձեալ վարժարանին տեղափոխութեան խնդրոյն յուզման։

Տեղական Հոգաբարձութիւնը նկատելով որ Գ. Արուլեան էֆէնտին՝ իր աղջիկը դարմանել տալու համար՝ Կ. Պոլիս պիտի ուղեւորի, պաշտօն յանձնեց անոր պարզել հոգաբարձական խորհրդածութիւններն ու տեսութիւնները, այն տեղափոխութեան խնդրոյն մասին։ 1902 Ապրիլ 5ին յիշեալ էֆէնտին Կարինէն Կ. Պոլիս ուղեւորեցաւ, եւ իր պաշտօնն ալ կատարելէ յետոյ, տարեկան արձակուրդին վերադարձաւ ի Կարին։

Կ. Պոլսոյ Խնամակալութիւնը իր կողմէն Խարբերդ ուղարկեց Ճարտարապետ Գրիգոր էֆ. Մելիտոսեանն եւ վարժարանին Սան-ուսուցիչներէն

Գէորգ էֆէնտի Ճիյէրճեանը, որոնք գացին տեղւոյն վրայ ուսումնասիրեցին թէ արդեօք Խարբերդ Սօրսօրու վանքին Ցրնտուղ բռնած տեղը եւ կամ քաղաքին ու Մէզրէին մէջ կա՞յ յարմարագոյն շէնք մը կամ գետին մը վարժարանը հոն փոխադրելու եւ ապա հոն կառուցանելու համար Հատատութեան սեփական շէնքը։ Յիշեալ էֆէնտիներն իրենց քննութեան արդիւնքը մէյ մէկ տեղեկագրով ներկայացուցին Խնամակալութեան։

Դեռ այս քննութիւնները չվերջացած, Կարնոյ Ընդհ. ժողովը՝ ամենայն պատրաստականութեամբ հաւանութիւն կը յայտնէր եկեղեցապատկան այդ շէնքերու երկրաշարժէն վնասուած մասերը նորոգել տալ՝ արկածելոց նպաստովը, կ'առաջարկէր որ վարժարանը նոյն շէնքերն ապահովագրել տայ 2000 Օսմ. լիրայի եւ վճարէ տարեկան ապահովագինը, վարձքն ըլլայ 100 Օսմ. լիրա՝ ըստ առաջնոյն, սովորական նորոգութիւններն եւ վարժարանին համար պէտք ըլլալիք շինութիւններն ըլլան վարժարանին ծախքով, ինչպէս առաջ, իսկ պայմանաժամն ըլլայ 10 տարի։

Այս պայմաններն երկուստէք ընդունելով՝ խմբագրուեցաւ հետեւեալ պայմանագիրն, որ հաստատուած է Կարնոյ Գաւառ. Վարչութեան Քաղ. ժողովէն եւ վաւերացուած՝ Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն ժողովէն։

## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Կարնոյ Գաւառ. Ընդհ. ժողովոյ 256 թուահամար եւ 1902 Յունիս 15 թուակիր եւ Սանասարեան վարժարանի Հոգաբարձութեան 1453 համար եւ 1903 Մարտ 19 թիւ պաշտօնագրոց վրայ, Սանասարեան վարժարանի Հոգաբարձութեան եւ Կարնոյ Հայոց Թաղ. Խորհրդոյ միջեւ կնքուած են հետեւեալ պայմանները։

Ա. Կարնոյ Ազգ. Թաղ. Խորհուրդը Ս. Եկեղեցւոյ շրջափակին արեւմտեան եւ արեւելեան հիւսիսային կողմը գտնուող եկեղեցապատկան վարժարանական շէնքերը՝ ներկայ գրութեամբ՝ 1902 Սեպտ. մէկէն սկսեալ, մէկէն մինչեւ տասը տարուան համար Սանասարեան վարժարանի Հոգաբարձութեան վարձու կուտայ՝ ի կիրառութիւն յիշեալ վարժարանի պէտքերուն, եւ Սանասարեան վարժարանի Հոգաբարձութիւնը նոյն շէնքերը իր կիրառութեան համար, կը վարձէ միեւնոյն պայմանաժամու։

Բ. Սանասարեան վարժարանի Հոգաբարձութիւնը պարտաւոր է յիշեալ եկեղեցապատկան շէնքերն ամբողջապէս ապահովագրել տալ 2000* երկու հազար Օսմ. լիրա արժէքով, որոյ տարեկան ապահովագինն Սանա-



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

տարեան վարժարանի մնացուկն պիտի վճարէ վարձքէն դուրս եւ առանց երբեք այդ առթիւ եկեղեցւոյ մնացուկէն ո՛ եւ է պահանջում ընելու ո՛չ մի ժամանակ։

Գ. Սանասարեան վարժարանի Հոգաբարձութիւնը յիշեալ եկեղեցապատկան շէնքերուն համար Ազգային Թաղ. Խորհրդոյն վարձք պիտի վճարէ տարեկան 100 Օսմ. ոսկի իւրաքանչիւր տարւոյ Սեպտեմբեր մէկին կանխիկ, ինչպէս արդէն վճարած է 1902 Սեպտ. 1—31 Օգոստոս 1903 տարեշրջանի վարձքն 100 հարիւր Օսմ. ոսկի. իսկ Թաղ. Խորհուրդը պարտաւոր է տարեվարձքը գանձելուն, ամէն տարի Սանասարեան վարժարանի Հոգաբարձութեան տալ՝ Գաւառ. Վարչութեան Թաղ. ժողովէն վաւերացեալ՝ հարկ եղած ընկալագիրը ։

Դ. Սանասարեան վարժարանին կը պատկանին յիշեալ շէնքերուն նորոգութեան եւ պահպանութեան բոլոր ծախքերը եւ եթէ երբեք Սանասարեան վարժարանը իր գործածութեան համար նոր շէնքերու եւս պէտք ունենայ, անոնց շինութեան ծախքերն եւս իր կողմէ պիտի հոգացուին՝ Ազգէն առանց երբեք բան մը պահանջուելու. իսկ շինութեանց տեղն ու ձեւը Կարնոյ Գաւառ. Վարչութեան Թաղ. ժողովոյ եւ Սանասարեան վարժարանի Հոգաբարձութեան համաձայնութեամբ պիտի որոշուին, որպէս զի անոնք կարենան Ազգին եւս օգտակարապէս ծառայել, երբ Սանասարեան վարժարանը Ազգին յանձնէ նոյն շէնքերը։

Սոյն պայմանագրութիւնն երկու օրինակ ըլլալով եւ երկուստեք ստորագրուելով ու վաւերացուելով Կարնոյ Հայոց Գաւառ. Վարչութեան Թաղ. ժողովէն, փոխանակուեցաւ Սանասարեան վարժարանի Հոգաբարձութեան եւ Ազգ. Թաղ. Խորհրդոյ միջեւ ի գործադրութիւն։

Ի Դիմաց Հոգաբարձութեան

Անդամ Տեսչութեան
ԳԷՈՐԳ ԱԲՈՒԼԵԱՆ

Առաջ. Կարնոյ եւ նախագահ
Հոգաբարձութեան Սանասարեան վարժարանի.
ԶԱՒԷՆ ՎՐԴ. Տ. ԵՂԻԱՅԵԱՆ

Ի Դիմաց Ազգ. Թաղ. Խորհրդոյ Կարնոյ

Ատենադպիր
Մ. ԱՂՊԼԵՆ

Ատենապետ
Մհի. ՂԱԶԱՐ

Քարտուղար
ԱՐՍԷՆ ԱՒԵՏԻՔԵԱՆ

Կնիք
Թաղ. Խորհրդոյ

---

* Գումար՝ որ ետքէն վերածուած է 3000 լրյ.ի խնամակալութեան որոշմամբ։

*Սոյն պայմանագրութեան տրամադրութիւնները կը հաստատենք ի գործադրութիւն։*

Գաւառ. Վարչութեան Բաղ. Ժողովոյ

| Ատենադպիր | Ատենապետ | Նախագահ |
| --- | --- | --- |
| Ս. ՓԱՍՏՐՄԱՃԵԱՆ | Կ. Տ. ԱԶԱՐԵԱՆ | ԶԱՒԷՆ ՎՐԴ. ՏԷՐ ԵՂԻԱՅԵԱՆ |

*Յաւելուածական տրամադրութիւնք.* 1.— *Սանասարեան վարժարանի Հոգաբարձութիւնը իրաւունք պիտի ունենայ պայմանագրեալ տասնամեայ շրջանին մէջ ուզած ատենն թողուլ շէնքն եւ վերադարձնել Թաղ. Խորհրդոյ, թողելու թուականէն վեց ամիս առաջ գրաւորապէս զեկուցումն ընելով առ այդ Գաւառական վարչութեան եւ վճարելով նոյն ընթացիկ տարւոյ վարձքը ամբողջովին։ Ասկէ զատ Թաղական Խորհուրդն եւ Գաւառական Վարչութիւնը որ եւ է պահանջում ընելու իրաւունք չունին։*

2.— *Հոգաբարձութիւնն վարժարանական շէնքն վերադարձուցած ատեն, առանց ո եւ է փոխարինութեան Թաղական Խորհրդոյ պիտի թողու վարժարանի շրջափակին մէջ մինչեւ այդ թուական Սանասարեան Հաստատութեան ծախքով շինուած բոլոր միայուն շէնքերն։*

*Թիւ* 625.— *Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովն* 1905 *Նոյեմբեր* 23*ի նիստին մէջ Կարնոյ Թաղական Խորհրդոյ եւ Սանասարեան Վարժարանի հոգաբարձութեան միջեւ կնքուած ներկայ պայմանագրութիւնը ընդունելի գտած եւ հաստատած է երկու յաւելուածական յօդուածներով։*

30 *Դեկտեմբեր* 1905 *Պատրիարք Կ. Պոլսոյ*

*ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ.*

*Ըստ այս պայմանագրութեան,* 1902*ին նորոգուեցան վարժարանին երկրաշարժէն վնասուած մասերը։*

1906*ին թէեւ նորէն յուզուեցաւ վարժարանին տեղափոխութեան խնդիրը, սակայն անհետեւանք մնաց։*



## Դ.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

*Վարժարանը երեք տեսուչներէն զատ, որոնք սկիզբէն ի վեր դասախօսած են, ունեցած է գլխաւոր եւ օգնական ուսուցիչներ։*

### ՏԵՍՈՒՉՆԵՐ

Պ. Գէորգ Աբուլեան. — *Ուսուցիչ Պատմութեան, Աշխարհագրութեան եւ Գերմաներէնի։*

Պ. Յովսէփ Մատթէեան. — *Ուսուցիչ Բնապատմութեան, Գերմաներէնի եւ Գծագրութեան։*

Պ. Սարգիս Սողիկեան. — *Ուսուցիչ Կրօնագիտութեան, Դաշնակի եւ Ֆրանսերէնի։ Վերջին* (1905—6) *տարին դասախօսեց նաեւ Հայերէն։*

### ԳԼԽԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Պ. Դաւիթ Ումիկեան. — *Ուսուցիչ Ուսողութեան, (Թուաբանութիւն, Տոմարակալութիւն, Դրահաշիւ, Երկրաչափութիւն եւ Եռանկիւնաչափութիւն)։*

Պ. Աստուածատուր Խաչատրեան. — *Ուսուցիչ Հայերէնի (Աշխարհաբար եւ Գրաբար), Տոհմ. եւ Եկեղեցական Պատմութեանց։ Կ'առաջնորդէր նաեւ Հայերէն բանախօսական վարժութիւններուն։*

Պ. Նիկողայոս Թոփլայեան. — *Ուսուցիչ Օսմաներէնի եւ Ֆրանսերէնի։*

Պ. Գէորգ Ճիյէրճեան. — *Ուսուցիչ Տարրաբանութեան, Բնաբանութեան, եւ Բնապատմութեան։ Դասախօսած է նաեւ Աշխարհագրութիւն եւ Ֆրանսերէն։*

Պ. Սիմոն Աղապալեան. — *Ուսուցիչ Բնաբանութեան, Թուաբանութեան, Տարրաբանութեան, Գծագրութեան, Մարմնամարզի եւ Բնապատմութեան։ Դասախօսած է նաեւ Գերմաներէն եւ Աշխարհագրութիւն։*

Պ. Ժան Քրէսբէյ. — *Ուսուցիչ Ֆրանսերէնի։ Աւանդած է նաեւ Գծագրութիւն, Ֆրանսերէն, Գեղագրութիւն եւ Երգ։*

Իսմայիլ Էֆէնտի. — *Ուսուցիչ Օսմաներէնի, Օրէնսգիտութեան եւ Օսմ. Պատմութեան։*

Համդի Ալի էֆէնտի. — *Ուսուցիչ Օսմաներէնի, Օրէնսգիտութեան եւ Օսմ. Պատմութեան։*

Մուսթաֆա էֆէնտի. — *Ուսուցիչ Օսմաներէնի եւ Օսմ. Գեղագրութեան։*

Պ. Լեւոն Փասպանեան. — *Ուսուցիչ Ֆրանսերէնի։ Դասախօսեց նաեւ Ֆրանսերէն գրութիւն։*

Հարիւրապետ Ահմէտ էֆէնտի. — *Ուսուցիչ Նուագախումբի։*

### ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

*Վարժարանին* 1901—1906 *տարիներու Օգնական Ուսուցիչներուն անունները կ'երեւան յետագայ Գ. ցուցակին մէջ։ Իբրեւ օգնական ուսուցիչ պաշտօնավարութիւն ունեցած են 1. — Պ. Տիգրան Բրուտեան, որ կ'աւանդէր Օսմաներէն եւ երբեմն Թուաբանութիւն եւ 2. — Պ. Գրիգոր Ղոյինեան, ուսուցիչ Երգի, Ջութակի եւ Գեղագրութեան։ Աւանդած է նաեւ Կրօն, Աշխարհագրութիւն եւ Նուագածութիւն։*



## Գ. ՑՈՒՑԱԿ

Հնգամեայ ընդհանուր ցուցակ ուսուցիչներու՝ իրենց դասախօսութեան շաբաթական ժամերով

| ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | Սկզբնաւորութ. | Դադարում | 1901-1902 | 1902-1903 | 1903-1904 | 1904-1905 | 1905-1906 |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ա. ՏԵՍՈՒՉՆԵՐ | | | | | | | |
| Պ. Գէորգ Աբուլեան | Սկիզբէն | — | 18 | 19 | 19 | 19 | 19 |
| » Յովսէփ Մասաքեան | » | — | 19 | 19 | 19 | 19 | 17 |
| » Սարգիս Սողիկեան | » | — | 17 | 19 | 19 | 20 | 20 |
| Բ. ԳԼԽ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | | | | | | | |
| Պ. Դաւիթ Ումիկեան | 1884 Հոկտ. 16 | — | 24 | 24 | 23 | 23 | 23 |
| » Աստուածատուր Խաչատրեան | 1885 Սեպ. 7 | — | 26 | 25 | 25 | 26 | 24 |
| » Նիկողայոս Թորվայեան | 1893-4ի սկզբ. | 1902 Հոկ. 11 | 32 | — | — | — | — |
| » Գէորգ Ճիլէրճեան | 1899 Նոյմ. 26 | 1903 Օգս. 31 | 12 (1) | 14 (2) | — | — | — |
| » Սիմոն Աղապալեան | 1899 Նոյմ, 26 | — | 14 (3) | 18 (3) | 24 | 24 | 21 |
| » Ժան Բրէսբէյ | 1900-1 ի սկզբը. | 1905 Յլս. 1 | 20 | 24 | 25 | 25 | — |
| Իսմայիլ էֆ. | 1902-3 ի » | 1903 » 1 | — | 10 | — | — | — |
| Մուսթաֆա էֆէնտի | » » | 1905 » 1 | — | 11 | 8 | 8 | — |
| Համդի Ալի էֆէնտի | 1903-4 ի » | 1906 Յուն. 30 | — | — | 9 | 9 | 13 |
| » Լեւոն Փասպանեան | 1905 Սեպ. 19 | — | — | — | — | — | 23 |
| Հարիւրապետ Ահմէտ էֆ. | 1903 Յնվ. | 1903 Յուն. 30 | — | 3 | — | — | — |
| Գ. ՕԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ | | | | | | | |
| Պ. Տիգրան Բրուտեան | 1883 Մարտ 6 | 1906 Փետր. 27 | — | 9 | 8 | 12 | 12 |
| » Գրիգոր Ղոյինեան | 1891-2 ի սկզբ. | — | 22 | 22 | 23 | 23 | 23 |
| » Յակոբ Պէզիրճեան | 1900-1 ի » | 1902 Օգոս. 31 | 19 | — | — | — | — |
| » Վահան Գույումճեան | 1900-1 ի » | » » 31 | 15 | — | — | — | — |
| » Վահան Բէպապնեան | 1901-2 ի » | » » 31 | 11 | — | — | — | — |
| » Յովհաննէս Տէրունի | 1902-3 ի » | 1903 » 31 | — | 16 | — | — | — |
| » Մանուէլ Տէտէեան | 1902-3 ի » | 1904-5 ի վերջը | — | 14 | 17 | 8 | — |
| » Յովհաննէս Տ. Պօղոսեան | 1903-4 ի » | 1903-4 ի » | — | — | 21 | — | — |
| » Խորէն Չիքճեան | 1904-5 ի » | 1906 Փետր. 27 | — | — | — | 17 | 18 |
| » Տիգրան Ամսէեան | 1905-6 ի » | » » 21 | — | — | — | — | 16 |
| » Վահէ Թոկանեան | 1906 Մարտ 6 | » Յուն. 30 | — | — | — | — | 22 |
| » Սերովբէ Նորասուկեան | » » 16 | — | — | — | — | — | 23 |

(1) *Բաց ի քիմիական ճիւղի 12 դասէն*

(2) *Բաց ի քիմիական ճիւղի 10 դասէն։*

(3) *Բաց ի արհեստանոցի մէջ ունեցած զբաղումներէն։*

## Ե.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐ

Հետեւեալ Դ. Ե. Զ. Է. Ը. և Թ. ցուցակներուն մէջ կը ներկայացնենք վարժարանին ուսումնական բաժնի աշակերտներուն վրայ մանրամասն վիճակագրական տեղեկութիւններ։

Դ. ցուցակը կը ներկայացնէ կանոնաւորապէս դասարան փոխող, կրկնող, վարժարանական տարւոյ սկիզբը եւ ընթացքին մէջ ընդունուած աշակերտաց ինչպէս նաեւ ընթացաւարտներու եւ շրջանաւարտ չեղած՝ վարժարանէն ելնող աշակերտաց թիւերը։

Ե. Ցուցակը կը ներկայացնէ թոշակաւոր եւ ձրիավարժ աշակերտները՝ իրենց ծննդավայրերուն համեմատ։ Ինչպէս կ'երեւի այդ ցուցակէն, վերջին 5 տարուան մէջ, ամենէն աւելի թոշակաւոր աշակերտ ղրկած են Կարին, Խնուս, Արաբկիր եւյլն։ Կարինէն ընդունուած ձրիավարժներն առ հասարակ ցերեկեայ եղած են, իսկ միւս քաղաքներէն ընդունուած ձրիավարժներն առ հասարակ գիշերօթիկ՝ ըստ վերջին կարգադրութեան։

Վարժարանին Ուսումնական բաժնին մէջ հաստատութեան բացումէն ի վեր ընդունուած են ընդամէնը

| | |
|---|---|
| Գիշերօթիկ եւ ցերեկեայ թոշակաւոր աշակերտ | 393* |
| եւ գիշերօթիկ եւ ցերեկեայ ձրիավարժ աշակերտ | 232 |
| Համագումար | 625 աշակերտ |

Զ. Ցուցակը կը ներկայացնէ իւրաքանչիւր տարւոյ աշակերտները ձրիավարժներու եւ թոշակաւորներու բաժանմամբ։

Է. Ցուցակը կը ներկայացնէ իւրաքանչիւր տարւոյ աշակերտները՝ դասարաններու բաժանմամբ։

Ինչպէս կ'երեւի այդ ցուցակէն, վարժարանը միշտ լրիւ ունեցած է եօթը դասարանները. որով եւ յաջողած է ամէն տարի ընթացաւարտ ընծայելու։

Ը. Ցուցակը կը ներկայացնէ վարժարանին մէջ 1901—5 սան ունեցող բարերարներու անունները եւ անոնց սաներու թիւերը։ 1902—3 տարւոյ սկիզբը բարերարներու ամենամեծ մասը իր նպաստները դադրեցուցած ըլլալով՝ անպաշտպան մնացած սաները անցան վարժարանին գիշերօթիկ ձրիավարժներու շարքին մէջ, որով այս վերջիններու թիւը բարձրացած է 45ի։ Վարժարանին Վարչական մարմինները հարկ դատեցին ընել այս զոհողութիւնը եւ չարձակել անպաշտպան մնացած սաները, մանաւանդ որ այս վերջիններէն շատերը կը գտնուէին արդէն բարձրագոյն դասարաններու մէջ։ Ասկէ զատ անոնց արձակմամբ, բարձրագոյն դասարանները կրնային յանկարծ կազմալուծուիլ, ինչ որ պիտի զրկէր վարժարանս պարբերաբար ընթացաւարտ տալու բաղձալի վիճակէն։

* Որոնցմէ 16ը նախապէս թոշակաւոր աշակերտ։



Թ. Ցուցակէն կ'երեւի թէ իւրաքանչիւր տարի քանի՞ թոշակաւոր, քանի՞ ձրիավարժ եւ քանի՞ պաշտպանեալ աշակերտ հեռացած են դաշնակի եւ ջութակի դասերուն։

## Դ. ՑՈՒՑԱԿ

### ՀՆԳԱՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՈՒՍՈՒՄՆ. ԲԱԺՆԻ

| ԱՇԱԿԵՐՏՆԵՐ | 1901—1902 | 1902—1903 | 1903—1904 | 1904—1905 | 1905—1906 |
|---|---|---|---|---|---|
| Կանոնաւորապէս դասարան փոխող | 105 | 80 | 112 | 93 | 84 |
| Կրկնող | 51 | 26 | 15 | 21 | 16 |
| Նոր ընդունուող | 14 | 22 | 24 | 14 | 41 |
| Վերստին ընդունուող | — | 14 (1) | 1 | 1 | 1 |
| Վարժարանական տարուան ընթացքին մէջ մեռնող | — | 3 | 1 | 4 | — |
| **Գումար ընդհանուր աշակերտաց** | 170 | 145 | 153 | 133 | 142 |
| Վարժարանական տարուան ընթացքին մէջ մեկնող | 38 (2) | 1 | 5 | 8 | 2 |
| Մինչեւ տարուան վերջը մնացող | 132 | 144 | 148 | 125 | 140 |
| Շրջանաւարտ | 13 | 11 | 18 (3) | 18 | 14 |
| Տարեշրջանին վերջը շրջանաւարտ չեղած դպրոցէն մեկնող | 13 | 6 | 16 | 4 | 9 |

(1) Ամենքն ալ դասարան փոխող

(2) Երկրաշարժի պատճառաւ:

(3) Զ. Դասարանէն Բ. կիսամեակին սկիզբը մեկնող 2 աշակերտներ եւս՝ 1906ին՝ ընթացաւարտի վկայականի արժանացան:

Առնցմէ զատ, Օրիորդ մ՚ալ վկայական ստացած է 1903—4ին:



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Հիւսիս.-Արեւել. կողմն

## Ե. ՑՈՒՑԱԿ

### ՀՆԳԱՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԹՈՇԱԿԱՒՈՐ ԵՒ ՁՐԻԱՎԱՐԺ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԻՐԵՆՑ ԾՆՆԴԱՎԱՅՐԵՐՈՒՆ ՀԱՄԵՄԱՏ

| ԹԻՒ | ԾՆՆԴԱՎԱՅՐ ԱՇԱԿԵՐՏԱՑ | ԹՈՇԱԿԱՒՈՐ | ԹԻՒ | ԾՆՆԴԱՎԱՅՐ ԱՇԱԿԵՐՏԱՑ | ՁՐԻԱՎԱՐԺ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Կարին | 38 | 1 | Կարին | 15 |
| 2 | Խնուս | 12 | 2 | Խնուս | 3 |
| 3 | Արաբկիր | 8 | 3 | Արաբկիր | 2 |
| 4 | Բաղէշ | 5 | 4 | Ակն | 2 |
| 5 | Խարբերդ | 4 | 5 | Բաղէշ | 2 |
| 6 | Պայազիտ | 3 | 6 | Մուշ | 2 |
| 7 | Մանազկերտ | 2 | 7 | Տրապիզոն | 2 |
| 8 | Տրապիզոն | 2 | 8 | Այնթապ | 1 |
| 9 | Արտահան ( Ռուսիա ) | 1 | 9 | Արտահան ( Ռուսիա ) | 1 |
| 10 | Բաբերդ | 1 | 10 | Բաբերդ | 1 |
| 11 | Երիզա | 1 | 11 | Բասեն | 1 |
| 12 | Կամախ | 1 | 12 | Եւդոկիա | 1 |
| 13 | Կիրասոն | 1 | 13 | Կինն | 1 |
| 14 | Կ. Պոլիս | 1 | 14 | Կիւմիւշխանէ | 1 |
| 15 | Մուշ | 1 | 15 | Մարաշ | 1 |
| 16 | Վան | 1 | 16 | Մարզուան | 1 |
| 17 | Տիվրիկ | 1 | 17 | Պուլանըգ | 1 |
| | | | 18 | Վան | 1 |
| | | | 19 | Տիարպէքիր | 1 |
| | Գումար ( 1901 –1906 ) | 83 | | Գումար ( 1901—1906 ) | 40 |
| | Գումար ( 1881—1901 ) | 292 | | Գումար ( 1881—1901 ) | 210 |
| | Համագումար (1881 – 1906) | 375 | | Համագումար (1881—1906) | 150 |

## Զ. ՑՈՒՑԱԿ

### ՀՆԳԱՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՈՒՍՈՒՄՆ. ԲԱԺՆԻ ՁՐԻԱՎԱՐԺՆԵՐՈՒ ԵՒ ԹՈՇԱԿԱՒՈՐՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄԱՄԲ

| ՏԱՐԵՇՐՋԱՆ | Գիշերօթիկ ձրիավարժ (Սանասարեան սան) | Գիշերօթիկ պաշտպանեալ Թոշակաւոր | Գիշերօթիկ 20 Լիրա Տարեթոշակով | Գիշերօթիկ 12 Լիրա Տարեթոշակ եւ ընկից պայ | Ցերեկեայ ձրիավարժ (Սանասարեան սան) | Ցերեկեայ 6 Լիրա Տարեթոշակով | Գումար |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1901—1902 | 17 | 61 | 7 | 24 | 14 | 47 | **170** |
| 1902—1903 | 45 | 13 | 4(*) | 11 | 12 | 60 | **145** |
| 1903—1904 | 35 | 13 | 9(*) | 6 | 13 | 77 | **153** |
| 1904—1905 | 24 | 8 | 11(*) | 9 | 12 | 69 | **133** |
| 1905—1906 | 31 | — | 5(*) | 8 | 25 | 73 | **142** |

(*) Մին զեղչեալ թոշակով (16 լիրա Օսմ.)

## Է. ՑՈՒՑԱԿ

### ՀՆԳԱՄԵԱՅ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄԱՄԲ

| ՏԱՐԵՇՐՋԱՆ | Պ. Դասարան | Ա. Դասարան | Բ. Դասարան | Գ. Դասարան | Դ. Դասարան | Ե. Դասարան | Զ. Դասարան | Գումար |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1901—1902 | 14 | 35 | 40 | 28 | 23 | 15 | 15 | **170** |
| 1902—1903 | 16 | 28 | 27 | 23 | 22 | 18 | 11 | **145** |
| 1903—1904 | 17 | 18 | 38 | 24 | 19 | 19 | 18 | **153** |
| 1904—1905 | 8 | 19 | 29 | 27 | 16 | 16 | 18 | **133** |
| 1905—1906 | 18 | 17 | 29 | 34 | 22 | 8 | 14 | **142** |



## Ը. ՑՈՒՑԱԿ

### ՑՈՒՑԱԿ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՈՆՑ ՊԱՇՏՊԱՆԱԾ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԱՇԱԿԵՐՏԱՑ

| ՊԱՇՏՊԱՆՆԵՐ | 1901—1902 | 1902—1903 | 1903—1904 | 1904—1905 |
|---|---|---|---|---|
| Արհեստանոցի Յանձնաժողով ի Կ. Պոլիս | 3 | — | — | — |
| † Մարգար Պօպովեանի կտակին արդիւնքով | 10 | 10 | 10 | 5 |
| † Պ. Առաքել Ծատուրեանց | 12 | — | — | — |
| Պ. Պօղոս Ղուկասեանց | 10 | — | — | — |
| Պ. Եղիշէ Նաքաշեանց | 5 | — | — | — |
| Անյայտ բարերար ( † Երուանդ Բուղաղեանց ) | 3 | 3 | 3 | 3 |
| Պ. Բագլար Դուլուխանեանց | 3 | — | — | — |
| Պ. Յովհաննէս Ադամեանց | 3 | — | — | — |
| Պ. Յարութիւն Ադամեանց | 3 | — | — | — |
| Պ. Գրիգոր Առաքելեանց | 3 | — | — | — |
| Պ. Մ. Միրզաբէգեանց | 2 | — | — | — |
| Պ. Բալաբէգ Լալայեանց | 2 | — | — | — |
| Պ. Սարգիս Զանումեանց | 1 | — | — | — |
| Պ. Իսահակ Ժամհարեանց | 1 | — | — | — |
| **Գումար** | **61** | **13** | **13** | **8** |

## Թ. ՑՈՒՑԱԿ

### ՑՈՒՑԱԿ ԴԱՇՆԱԿԻ ԵՒ ՋՈՒԹԱԿԻ ՀԵՏԵՒՈՂ ԱՇԱԿԵՐՏԱՑ

| ՏԱՐԵՇՐՋԱՆ | Դաշնակ | | | | Ջութակ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Թոշակաւոր | Ձրիավարժ | Պատսպարեալ | **Գումար** | Թոշակաւոր | Ձրիավարժ | Պատսպարեալ | **Գումար** |
| 1901–1902 | 1 | 4 | 4 | **9** | 6 | 7 | 31 | **44** |
| 1902–1903 | — | 5 | 1 | **6** | 1 | 20 | 6 | **27** |
| 1903–1904 | 1 | 5 | 1 | **7** | 8 | 16 | 5 | **29** |
| 1904–1905 | 5 | 2 | 1 | **8** | 8 | 5 | 4 | **17** |
| 1905–1906 | 3 | 3 | — | **6** | 5 | 7 | — | **12** |



# Ջ.

# ԱՐՀԵՍՏԱՆՈՑ

## 1901–1906

Արհեստանոցը վարժարանական 1901—2 տարեշրջանին մէջ ունէր 1. — Մեքենագիտութեան ճիւղ՝ Կահագործութեան եւ Կողպարարութեան բաժիններով եւ 2. — Տարրաբանական ճիւղ, 1900—1901 ին պատրաստուած եւ գործադրութեան դրուած ծրագրին համեմատ։

Մեքենագիտական ճիւղն ունէր քառամեայ դասընթացք, իսկ Տարրաբանականը՝ եռամեայ։

Մեքենագիտական ճիւղի Ա. դասարանը կը համապատասխանէր Վարժարանիս Ուսումնական բաժնի Գ. դասարանին, իսկ Տարրաբանական ճիւղի նոյն դասարանը՝ Դ. դասարանին։

Ըստ ծրագրին, Մեքենագիտական ճիւղի Ա. դասարանին մէջ աւանդելի առարկաներն էին 1. — Կրօն, 2. — Աշխարհաբար Հայերէն, 3. — Օսմաներէն, 4. Աշխարհագրութիւն, 5. — Թուաբանութիւն, որոնք պիտի աւանդուէին Ուսումնական բաժնի Գ. դասարանի հետ միասին, իսկ առանձին այդ դասարանին մէջ պիտի արուէին նաեւ Գծագրութիւն, Երկրաչափութիւն եւ Գործնական զբաղում, ընդամենը շաբաթական 38 ժամ։

Նոյն ճիւղի վերին դասարաններու աշակերտներն ասոնցմէ զատ, կը կը հետեւէին նաեւ ինչ ինչ առարկաներու։

Տարրաբանական ճիւղի Ա. դասարանին մէջ կ'աւանդուէին 1. — Կրօն, 2. — Աշխարհաբար Հայերէն, 3. — Օսմաներէն 4. — Գերմաներէն կամ Ֆրանսերէն, 5. — Թուաբանութիւն, 6. — Գրահաշիւ, որոնք կ'աւանդուէին Ուսումնական բաժնի Դ. դասարանի հետ միասին, իսկ առանձին կ'աւանդուէին՝ այդ դասարանին մէջ՝ Անգործարանաւոր Տարրաբանութիւն, Գործնական Աշխատանք, ընդամենը շաբաթական 30 ժամ։

Արհեստագիտական բաժնի վերին դասարանաց ծրագիրը չկազմուեցաւ ի ստորեւ բացատրելի պատճառներով։

Արհեստագիտական բաժնի աշակերտները գործնական զբաղումներու կը պարապէին կէսօրէն յետոյ 3 ժամ անընդհատ։ Իսկ կէսօրէն առաջ, կը հետեւէին Ուսումնական բաժնի իրենց համապատասխանող դասարաններու աշակերտաց հետ՝ վերոյիշեալ դասերուն։

Արհեստանոցն ունէր երկու տեսակ աշակերտ. —

1. — Ուսումնական բաժնին չմասնակցողներ, որոնք ու հասարակ տեղացի ցերեկեայ ձրիավարժներ էին։

2. — Այնպիսի արհեստաւոր աշակերտներ, որոնք կը մասնակցէին Ուսումնական բաժնի ինչ ինչ առարկաներու եւ մնացեալ ժամանակին մէջ կ՚զբաղէին արհեստով, այս կարգի աշակերտներ կրնային ըլլալ գիշերօթիկ կամ ցերեկեայ, ընտրուած գրեթէ ամբողջովին ձրիավարժներէն։

Արհեստանոց ընդունելիք այն աշակերտներն, որոնք որ կ՚ուզէին մի միայն արհեստի հետեւիլ պէտք է որ ըլլային 14—18 տարեկան եւ աւարտած՝ Ազգ. Նախակրթարանի մ՚ընթացքը։ Իսկ անոնք որ կ՚ուզէին Ուսումնական բաժնին մասնակցելով 3—4 տարուան մէջ աւարտել Արհեստագիտական բաժնի ընթացքը, պէտք է որ ըլլային նոյնպէս 14—18 տարեկան եւ ունենային այնչափ ուսումնական պատրաստութիւն, որ կարենային մտնել Ուսումնական բաժնի Գ. կամ Դ. դասարանը, իսկ որոնք որ քառամեայ (Մեքենագիտական) կամ եռամեայ (Տարրաբանական) ընթացքն սկսելու համար պահանջուած տարիքն ու պատրաստութիւնը չունենային, կրնային ընդունուիլ Ուսումնական բաժնին մէջ՝ իրենց յարմար աւելի ստորին դասարան մը եւ նախապատրաստուիլ հետզհետէ։

1901—2 ին Կահագործութեան ճիւղի Ա. դասարանը (Ուսումն. Բաժնի Գ. Դասարան) ունեցաւ 5 աշակերտ, իսկ Կոշկարարութեան ճիւղի նոյն դասարանը չկազմուեցաւ, որովհետեւ այդ արհեստին հետեւող չգտնուեցաւ։

Նոյն տարին Տարրաբանութեան ճիւղի Ա. դասարանը (Ուսումն. Բաժնի Դ. դասարանը) կազմուեցաւ 3 աշակերտով։

1902—3ին Կոշկարարութեան ճիւղը փակուեցաւ, վասնզի այդ արհեստը արդիւնաւորութիւն ցոյց չէր տար։

1901—2ին Տարրաբանական ճիւղին յատուկ դասարանի մը պատրաստութենէն եւ կահաւորումէն անմիջապէս յետոյ, 1902 Փետր. 28էն սկսեալ, կանոնաւորաբար շարունակուեցան դասախօսութիւնները մինչեւ Մայիս 29, երբ ուսուցիչը՝ Պ. Գ. Ճիկէրճեան մեկնեցաւ դէպի Խարբերդ



Խնամակալութեան հրամանաւ ուսումնասիրելու համար վարժարանին տեղափոխութեան խնդիրը։

1903—1904 տարւոյ սկիզբը փակուեցաւ նաեւ Տարրաբանական ճիւղը, որովհետեւ առ այդ յատկապէս պատրաստել տրուած ուսուցիչը վերջնապէս հրաժարեցաւ իր պաշտօնէն։

## ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Պ. Գէորգ Ճիկէրճեան (1901—1903) Տարրաբանական ճիւղի.
Պ. Գէորգ Գառնակերեան (1901—1902) Կոշկարարական ճիւղի.
Պ. Արամ Վահանեան (1901—1906) Կահագործական ճիւղի.

1902—1905 Կահագործութեան ճիւղին մէջ իբրեւ օգնական վարպետ աշխատեցաւ Կարնեցի Պ. Արամ Մուշեղեան, նոյն ճիւղի ընթացաւարտներէն։

## ԱՐՀԵՍՏԱՊԵՏՆԵՐ

Մեքենագիտական ճիւղի Արհեստապետն էր՝ 1901—1903 տարիներու մէջ Պ. Մ. Աղապալեան։ Իսկ Տարրաբանական ճիւղին Արհեստապետն էր նոյն այդ տարիներու մէջ Պ. Գէորգ Ճիկէրճեան։

Յետագայ Ժ. ցուցակը կը ներկայացնէ մանրամասնօրէն 1901—1906 տարիներու մէջ Արհեստանոցի զանազան ճիւղերուն հետեւող աշակերտաց թիւերը։

Իսկ ԺԱ. ցուցակը կը պատկերացնէ միմիայն արհեստի հետեւող աշակերտաց թիւերը, իրենց ծննդավայրերուն համեմատ։

Արհեստանոցը մի՛միայն արհեստի հետեւող թոշակաւոր աշակերտ բնա՛ւ չէ ունեցած։

## ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ

Արհեստանոցը Կահագործական ճիւղէն ընթացաւարտ ունեցած է.

1901—1902ին 3 հոգի (1ը ուսմանց եւս հետեւող)
1902—1903ին 1 » (ուսմանց » » )
1903—1904ին 1 » ( » » » )
1904—1905ին 4 » (3ը » » » )
1905—1906ին 1 » (մի՛միայն արհեստի հետեւող)
Գումար 10 »

Իսկ Կոշկարարութեան ճիւղէն, 1901—2ին ընթացաւարտ ունեցած է 2 հոգի (մէկը ուսմանց եւս հետեւող)։

Ասոնք ամէնքն ալ վկայական ստացած են՝ օգնական վարպետի աստիճանով։

1886—1901 Արհեստանոցն ունեցած է կահագործական եւ կոշկարարական ճիւղերէն 16 ընթացաւարտ ( 12ը միայն արհեստի հետեւող)
1901—1906 ունեցած է 12 » ( 5 » » » )

Համագումար 28 » 17 » » »

### ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արհեստանոցի կահագործութեան ճիւղն արտադրեց ընկուզէ զանազան կահեր՝ սեղան, գրասեղան, աթոռ, զգեստի դարան, արկղ, ճաշասեղան, մահճակալ, եռոտանի, ճաշարահի սպասադարան, բազմոց, կառքի անիւ, գրատախտակ, պատկերի շրջանակ, դուռ եւլն, եւ բրաւ զանազան նորոգութիւններ։

Կոշկարարութեան ճիւղն արտադրեց երկաթեայ օրորոցներ, մահճակալներ, զանազան տեսակ փականքներ եւ չոգեշարժ մեքենայի նմոյշ մը ( modèle ) եւ բրաւ ինչ ինչ նորոգութիւններ։

Իսկ Տարրաբանական ճիւղին մէջ եփրեւ նմոյշ պատրաստուեցան օճառ եւ մոմ։

1901—1906 տարիներու մէջ մասնաւորապէս յիշատակելի է հետեւեալ առարկաներու շինութիւնը։

1. Ճաշակաւոր, քանդակազարդ, ընկուզեայ գրասեղան մը Կարնոյ Նախկին Կուսակալ Նազըմ փաշայի համար ։

2. Քանդակազարդ եւ նուրբ սպասադարան (buffet) մը՝ աշխատակցութեամբ Պ. Պ. Ա. Վահանեանի եւ Հ. Քէօսէեանի ( վերջինը վարժարանին Արհեստանոցէն ընթացաւարտ ըլլալէ յետոյ, Զմիւռնիոյ մէջ կատարելագործած է արհեստը ) նոյն Կուսակալին համար ։

3. Քանդակազարդ գրասեղան մը վարժարանին համար ։

4. Երկաթեայ կալուանակերտ չքեղ ջահ մը, զոր շինեց վարժարանին 1904—5 շրջանի Զ. դասարանի աշակերտներէն Պ. Ղեւոնդ Ծիղմէճեան, որ նախապէս քանի մը տարի հետեւած էր կոշկարարութեան արհեստին. Կալուանակերտութեան աշխատանքին առաջնորդեց Պ. Սիմոն Աղապալեան։ Այդ ջահը եփրեւ նուէր տրուեցաւ Կարնոյ Ռուսական ընդհանուր Հիւպատոս՝ Պ. Սքուեապինին։




ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

1. Խոհանոց, 2. Փուռ, 3. Լուացարան

Արհեստանոցի գլխաւոր յաճախորդներն էին Կառավարական պաշտօնատուններ, Հիւպատոսներ, տեղայիններ, ինչպէս նաեւ վարժարանը։

### ԿԱԶՄԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Վարժարանին աշակերտներէն ոմանք 1901—1906 տարիներու մէջ, առաջնորդութեամբ բարձրագոյն դասարաններու կազմարարութիւն գիտցող աշակերտաց, ատեն ատեն կը կազմէին դասատետրեր եւ հին դասագրքեր։

## Ժ. ՑՈՒՑԱԿ

### ՑՈՒՑԱԿ ՄԻ ՄԻԱՅՆ ԱՐՀԵՍՏԻ ՀԵՏԵՒՈՂ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԻՐԵՆՑ ԾՆՆԴԱՎԱՅՐԵՐՈՒՆ ՀԱՄԵՄԱՏ

**1901—1906**

| ԹԻՒ | ԾՆՆԴԱՎԱՅՐ ԱՇԱԿԵՐՏԱՑ | ՁՐԻԱՎԱՐԺ |
|---|---|---|
| 1. | Կարին . . . . . . . . . . . . . | 8 |
| 2. | Տիվրիկ . . . . . . . . . . . . . | 1 |
| 3. | Խնուս . . . . . . . . . . . . . | 1 |
| 4. | Վարդոյ . . . . . . . . . . . . . | 1 |
| | Գումար | 11 |
| | 1886—1901 Զանազան տեղերէ ( Տե՛ս Քսանամեայ Տեղեկագիր, երես 56րդ ) : | 42 |
| | Համագումար ( 1886—1906 ) | 53 |



## ԺԱ. ՑՈՒՑԱԿ

### ՑՈՒՑԱԿ ԱՐՀԵՍՏԻ ՀԵՏԵՒՈՂ ԱՇԱԿԵՐՏԱՑ

| ԱՇԱԿԵՐՏՆԵՐ | 1901—2 | 1902—3 | 1903—4 | 1904—5 | 1905—6 |
|---|---|---|---|---|---|
| **Միայն արհեստի հետեւող ցերեկեայ ձրիավարժ** | | | | | |
| Կահագործութիւն | 6 | 5 | 7 | 4 | 4 |
| Կողպարարութիւն | 3 | — | — | — | — |
| **Ուսումնական բաժնի ինչ ինչ առարկաներու մասնակցող** | | | | | |
| Կահագործութիւն | 3 | 5 | 6 | 4 | 1 |
| Կողպարարութիւն | 1 | — | — | — | — |
| Տարրաբանական ճիւղ | 9 | 7 | — | — | — |
| **Գումար** | **22** | **17** | **13** | **8** | **5** |

## Է.

# ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՆԵՐՔԻՆ ԿԵԱՆՔԸ

Ժամակարգ.— Վարժարանին մէջ օրուան ժամանակի բաշխումը կատարուած է հետեւեալ ժամակարգին համաձայն․

Առաւօտեան զանգակը հնչուածին պէս, աշակերտներն իրենց անկողնէն կ'ելնեն, ձմեռը ժամը 6ին (Ը. Ե.), իսկ ամառը ժամը 5ին։

Ելնելու համար տրուած նշանէն կէս ժամ յետոյ, աշակերտներն արդէն հագուած, լուացուած և սանտրուած ըլլալով, կ'ընեն առաւօտեան աղօթքը՝ որ կը բաղկանայ՝ «Առաւօտ Լուսոյ» երգէն «Հայր Մեր»էն և «Գոհանամք զքէն Տէր Աստուած մեր» առաւօտեան մաղթանքէն։ Աղօթքէն յետոյ կ'սկսի առաւօտեան սերտողութիւնը, որ կը տեւէ ձմեռը $6^{40}$էն մինչև $7^{40}$, իսկ ամառը $5^{40}$էն մինչև $7^{40}$։ Ամառ ձմեռ ժամ $7^{40}$ին աշակերտները սեղանատան մէջ կը նախաճաշեն՝ ստանալով հաց, թէյ և պանիր, իսկ ամառնային օդափոխութեան միջոցին ի Սրտաձոր, կաթ և հաց կը տրուին իբրև նախաճաշ։

Նախաճաշը, ճաշն ու ընթրիքը կ'սկսին և կը վերջանան աղօթքով։

Նախաճաշէն յետոյ, մինչև դասերուն սկիզբը զբօսանքի ժամանակ է։

Ժամը $8\frac{1}{4}$էն մինչև 12, իւրաքանչիւր դասարան կ'առնէ 4 դաս։

Իւրաքանչիւր դաս կը տեւէ $\frac{3}{4}$ ժամ, իսկ մէկ մի դասամիջոց $\frac{1}{4}$ ժամ։

Ժամը $12\frac{1}{4}$ին տեղի կ'ունենայ ճաշը՝ որ կը բաղկանայ սովորաբար մէկ տեսակ պարզ կամ բանջարեղէնով խառն մսեղէն կերակուրէ և շաբաթը 1—2 անգամ պտուղէ և երբեմն խմորեղէնէ։

Ճաշէն յետոյ մինչև դասերուն սկիզբը զբօսանքի ժամանակ է։

Ժամը $2\frac{1}{4}$ին կ'սկսին կէս օրէն ետքը եղած դասերը և կը տեւեն մինչև ժամը 5։ Այն ժամերը, որոնց մէջ այս կամ այն դասարանը դաս չունի, սերտողութեան յատկացեալ են։

Դասերէն դուրս, բարձրագոյն դասարանները Ֆրանսերէն խօսակցութեան վարժութիւն կ'ունենան ժամը 1—2։ Այդ նոյն ժամուն, այս կամ այն տարւոյ մէջ ջութակի դաս ևս տրուած է։



Ժամը $5\frac{1}{4}$ին տեղի կ'ունենայ ընթրիքը՝ որ կը բաղկանայ մսեղէն կամ իւղեղէն կերակուրէ մը և ապուրէ կամ անուշեղէնէ։

Անկէ յետոյ մինչև ժամը 6, զբօսանքի ժամանակ է։ Վեցէն յետոյ մինչև պառկիլը եղած միջոցը յատկացեալ է սերտողութեան։

Ձմեռը $8\frac{1}{2}$ին, իսկ ամառը $7\frac{1}{2}$ին տեղի կ'ունենայ երեկոյեան աղօթքը, որ կը բաղկանայ «Հրեշտակ զուարթուն» երկձայն երգէն, «Տէր Աստուած մեր, դու պահեա՛ զմեզ» մաղթանքէն և «Հայր մեր»էն։ Փոքրերը կը պառկին ձմեռը $8\frac{1}{2}$ին, ամառը 8ին, իսկ մեծերը ձմեռը $9\frac{1}{2}$ին․ ամառը $8\frac{1}{2}$ին։

Ամէն կիւրակէ առաւօտ, ինչպէս նաև տօն օրեր, աշակերտները Ս. Եկեղեցի կ'երթան։

Այս ժամակարգը գրեթէ անփոփոխ պահուած է։

Աշակերտները պահք կը պահեն Ս. Ծննդեան շաբթուն և Մեծ պահոց առաջին և վերջին շաբաթները։ Ասոնցմէ զատ, շաբաթը երկու անգամ պահոց կերակուր կը տրուի։

Վարժարանին վերամուտը տեղի կ'ունենայ Սեպտեմբերի առաջին շաբթուն, ի ներկայութեան Հաստատութեան բոլոր պաշտօնէից և աշակերտաց։ Օրուան Առաջնորդ Ս. Հայրը կամ Վարժարանին Տեսչութիւնը խրատական քանի մը խօսք կ'ուղղէ աշակերտաց այդ առթիւ։ Առաջնորդը կամ փոխանորդը ապա աղօթքով մը կը փակէ այս պարզ հանդէսը։

Վարժարանական 1901—1902 տարեշրջանին մէջ դասերը դադրեցան 1901 Հոկտ. 26—Նոյեմ. 26՝ Կարնոյ երկրաշարժի զօրաւոր ցնցումներուն հետեւանօք։ Հոկտ. 26ի սաստիկ ցնցումէն անմիջապէս յետոյ, վարժարանին վարչութիւնը Հաստատութեան շրջափակին մէջ սարքել տուաւ վրաններ, որոնց ներսի կողմը պատել տուաւ ասուիով և հնարաւորը ի գործ դրաւ հանգստաւէտութեան ու տաքութեան տեսակէտներով։

1901 Հոկտ. 26—1902 Մայիս 1՝ երկրաշարժի ցնցումներուն պատճառաւ՝ աշակերտները գիշերեցին այդ վրաններուն ներքև։ Այդ շրջանին մէջ, ամէն օր, ընթրիքէն յետոյ աշակերտաց թէյ կը տրուէր, իբրև նախազգուշութիւն ընդ դէմ ցրտառութեան։ Գիշերօթիկ աշակերտաց մէյմէկ զոյգ կրկնակօշիկ (լաստիկ) ևս տրուեցաւ, որպէս զի անոնք չ'մսին և պաղ չ'առնեն։

1902—3 տարեշրջանի դասախօսութիւնք Հոկտ. 7ին սկսան այն պատճառաւ, որ վարժարանին երկրաշարժէն վնասուած շէնքերուն նորոգութիւններն ուշ վերջացան։

Բանախօսութեան վարժութիւններ տեղի ունեցան նոյն հնգամեայ շրջանին մէջ եւս, շաբաթը մի անգամ. միայն 1901—1902 տարեշրջանի վերջերը շաբաթը երկու անգամ։

Ե. և Զ. դասարանաց աշակերտներն իրենց զարգացման շրջանին համապատասխանող զանազան նիւթերու վրայ կարգով բանախօսութեան փորձեր կ'ընէին ի ներկայութեան նոյն և Դ. դասարաններու աշակերտաց։

Բանախօսը միշտ կ'ունենար կանխաւ նիւթը ուսումնասիրող ընդդիմաբան մը. կարծիքներ կը փոխանակուէին և քննադատութիւններ տեղի կ'ունենային։ Վարժարանին պաշտօնեաները երբեմն ներկայ կ'ըլլային այս հրապարակախօսութեանց։

Սոյն վարժութիւնները զգալի կերպով նպաստեցին աշակերտաց գաղափարներու յստակօրէն արտայայտութեան, համարձակախօսութեան և կարծիքներու փոխանակութեան։

Վիճաբանութեանց կ'առաջնորդէր Հայերէնի ուսուցիչ Պ. Ս. Խաչատրեան։

**Աշակերտաց առողջական վիճակը.**— Աշակերտները 1901—1906 տարիներու մէջ՝ թեթև և վաղանցիկ հիւանդութիւններ միայն ունեցան։ Մեռաւ միայն մէկ հոգի՝ ժանտատենդէ 1902ին, հակառակ բոլորանուէր հոգածութեանց և բժշկական ամենօրեայ խնամքներու և դարմաններու։

1901 Սեպտ. 1էն մինչև 1904 Հոկտ. 4 վարժարանին այցելու բժշկութեան պաշտօնը վարեց Քաղաքապետական բժիշկ Տոքթ. Շէրիֆ պէյ։ Հոկտ. 4էն մինչև 1905 Օգոստոս 31 նոյն բժշկին բացակայութեան պատճառաւ, հարկը պահանջած ատեն, այս կամ այն բժիշկը կը հրաւիրուէր։ 1905 Սեպտ. 1էն մինչև 30 Յունիս 1906 դարձեալ Տոքթ. Շէրիֆ պէյ վարեց նոյն պաշտօնը։

Աշակերտներու առողջութեան և մարմնական զարգացման մեծապէս նպաստած են Կարնոյ ընտիր օդն ու ջուրը, պարբերաբար տրուած մարմնամարզի դասերը, շրջագայութիւնները, չմշկութիւնը, լողալը և ամառնային վրանական կեանքը։

Աշակերտները տարւոյն մէջ քանիցս խումբ խումբ բաղնիք կ'երթան։

Վարժարանն ունի իր աշակերտներուն յատուկ համազգեստ, որ պարտաւորիչ է բոլորին համար։



Ճերմակեղէններու և զգեստներու մաքրութեան մեծ հոգ կը տարուի։

Վարժարանին հացը կ'եփուի իր շրջափակին մէջ գտնուած փուռին մէջ և այնքան մաքուր ու լաւ կը պատրաստուի, որ մինչև իսկ նախկին Կուսակալ Նազըմ փաշա վարժարանէն հաց կը գնէր. ինչպէս և Պ. Տէմիրի.ք(*)։

Տկարակազմ աշակերտներ ընդունուած չեն ի վարժարան, իսկ անոնք որոնց վատառողջութիւնն ի վերջոյ երևան եկած է, վերադարձուած են իրենց ծնողաց քով։

Ամբողջ քառորդ դարաշրջանի մէջ, վարժարանն ընդունուած 678 աշակերտներէն մեռած են միայն 10 աշակերտ, որոնցմէ 6ը՝ իրենց տուներուն մէջ հիւանդացած և մեռած են, 1ը՝ հայրենիք վերադարձած ատեն կառքի արկածի մը զոհ գացած է, իսկ երեքը՝ վարժարանին մէջ։

**Աշակերտաց վարքն ու բարքը.**— Վարժարանին ներքին հսկողութիւնը փոխն ի փոխ վարեցին կառավարիչները՝ երեք տեսուչներու հաւաքական վերին հսկողութեան ներքև։ Աշակերտներուն վարքն ու բարքը առհասարակ լաւ եղած է։

1901 Սեպտ. 1—31 Օգոստոս 1906 վարժարանէն արձակուեցան ընդ ամէնը 19աշակերտներ, բթամտութեան, ծուլութեան և յոռի վարքի պատճառաւ։

**Նուագախումբի կազմակերպութիւն.**— 1903 տարւոյ սկիզբը Կարնոյ Վսեմ. Կուսակալ Նազըմ փաշայի բարեհաճ թոյլտուութեամբ վարժարանին նուագածութեան ուսուցիչ կարգուեցաւ հարիւրապետ Ահմէտ էֆէնտի, որուն առաջնորդութեամբ, աշակերտները Յունուարէն մինչև Յունիս ամսոյ վերջը, շաբաթական 3 դաս առնելով յաջողեցան Եւրոպական ձայնագրութեամբ նուագել ընտիր եղանակներ։ Կարնոյ համար, վարժարանական հաճելի նորութիւն մ'էր այս, որ գոհունակութեամբ ողջունուեցաւ։

Նուագախումբի այս կազմակերպութիւնը առիթ ընծայեց աւելցնելու վարժարանական տօնական օրերուն և հանդէսներուն շրջագայութեանց և ամարանոցի հրապոյրն ու փայլը։

1905 — 1906ին Նուագախումբի դասերուն առաջնորդեց Պ. Գ. Ղոյինեան։

---

(*) Կարնոյ Ռուսական Ընդհ. Հիւպատոս։

Տրջագայութիւններ եւ արձակուրդ.—Աշակերտները գեղեցիկ եղանակին՝ առաջնորդութեամբ ուսուցիչներու՝ շրջագայութիւններ կատարեցին Կարնոյ մօտակայ վայրերուն մէջ, ինչպէս Խանըմ-Եօլի, Կան գիւղի շրջակայքը, Ագըլ-Աչըգ, Ս. Լուսաւորիչ վանքը, Սրտաձոր, Քարուոր, Ըղտաձոր, Խաչկայ վանք, Սանասար ու Եղեան աղբիւրները, Եփրատայ ակունքը՝ Խաչափայտ ու Խաչատրեան լիճը, Գըրգ Տէյիրմէն, Ապտ-իւր-Րահման Ղաղի և Իլիճէ։

Աշակերտները 1904—1905 տարիներու ամառնային արձակուրդներն անցուցին ի Սրտաձոր, վրանի տակ, միշտ ուսուցիչներու հետ միասին։

Հոն աւելի լաւ սնունդ կը տրուի աշակերտներուն և հոգ կը տարուի անոնց կազդուրման և մարմնական զարգացման։ Աշակերտները օրական 2—3 ժամ ընթերցանութեամբ կ'զբաղին։ Ուսուցիչները նախապէս կ'ընտրեն անոնց պէտք ընթերցանութեան գրքերը։ Ցատկապէս չինել տրուած լողարանի մը մէջ, որը երեք անգամ կանոնաւորապէս, ճաշերէն առաջ, կը լողան ամէնքն ալ և ապա մեծ ախորժակով կ'ընեն իրենց ճաշը։ Տարեթուան մէջ քանիցս շրջագայութիւններ կը կատարեն։ Իրիկնամուտին, վերջալոյսի խաղաղ պահուն, խմբովին կ'երգեն կամ կը խաղան ընդարձակ մարգագետիններուն մէջ։

1906ի ամրան արձակուրդին օրական շրջագայութիւններ սարքուեցան քաղաքին մօտակայ և հեռաւոր վայրերուն մէջ։

Այցելութիւններ.—1904—1906 տարիներու մէջ վարժարանը պատուած են իրենց այցելութիւններով կարեւոր անձնաւորութիւններ, ինչպէս Կարնոյ Կուսակալներէն Շէրիֆ Մէհմէտ Րէուֆ և Նազըմ փաշաները, Վեհ. Կայսեր թիկնապահ գնդապետ Ապտ-իւր-Րահիմ պէյ, Կարնոյ զինուորական հրամանատարներէն Մէհմէտ Ալի, Մինիր և Ահմէտ փաշաները և այլ Կառավարական Բարձր պաշտօնատարներ, Հիւպատոսներ, Եւրոպացիներ, ևն։ Նոյնպէս այցելած են Հայ և Հայ-Կաթոլիկ եպիսկոպոսներ, վարդապետներ և աշխարհականներ։

Ի Սրտաձոր վարժարանն ընդունած է այցելութիւններն Պետական Բարձրաստիճան պաշտօնատարներու, Հիւպատոսներու և այլոց, զորս հիւրասիրած է ըստ արժանւոյն։



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՆՈՐ ՇԷՆՔ

Հարաւ.-Արեւմ. եւ Հիւսիս.-Արեւմ. կողմերը:

## Ը.

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐ

**Տարեկան քննութիւններ.**— 1901—1905 դպրոցական 4 տարեշրջաններուն կանոնաւորապէս տեղի ունեցան հրապարակային քննութիւնները, որոնց ներկայ կը գտնուէին ընդհանրապէս Կարնոյ Առաջնորդը, Մէարիֆի ներկայացուցիչները, ուղեւոր վարդապետներ, տեղացի քահանաներ, վարժարանին հոգաբարձուները, Գաւառ. Ժողովոյ անդամներ, հայ վարժարանաց ուսուցիչներ, աշակերտաց ծնողքներ եւ ուրիշ հայ ու օտար ունկնդիրներ։

Տարեկան քննութիւնները տեղի կ՚ունենային բերանացի, բաց ի աւարտական դասարանի քննութիւնները, որոնք կը կատարուէին թէ՛ բերանացի եւ թէ՛ գրաւոր։

1906ին տարեկան բոլոր քննութիւնները կատարուեցան գրաւոր կերպով, ի ներկայութեան Խնամակալութեան կողմէ ուղարկուած Քննիչ Գրիգոր էֆ. Զաքարեանի։ Քննութիւններն աւարտելէ յետոյ, քննութեանց փորձերը՝ ուսուցիչներու գնահատումներով հանդերձ՝ ուղարկուեցան Խնամակալութեան՝ ի նկատառութիւն։

Ամէն տարի Զ. դասարանի Հայերէնի քննութենէն յետոյ, Տեսչութեան անդամ Ս. Սողիկեան էֆէնտի ընթացաւարտներուն կ՚ուղղէր իր «Հուսկ Բանք»ը, երբեմն անոր կը յաջորդէր Առաջնորդ Ս. Հօր խրատական բանախօսութիւնը եւ ապա Տէրունական աղօթքով ու «Պահպանիչ»ով կը փակուէր վարժարանական տարին։

**Շրջանաւարտներ.**— 1901—1906 վարժարանն ունեցած է 79 ընթացաւարտ (բաց ի օրիորդ մը, որ նոյնպէս վկայականի արժանացած է), որոնցմէ 67ը՝ ուսումնական բաժնէն, 7ը՝ ինչ ինչ ուսմանց եւ արհեստի միանգամայն հետեւող եւ 5ը՝ միմիայն արհեստի։

Ասոնց ամենուն անունները կը նշանակենք ի ստորեւ, ժամանակագրական կարգով.

| | | |
|---|---|---|
| 1902ին՝ | 16 | շրջանաւարտ (11ը՝ Ուսումնական բաժնէն, 2ը՝ քանի մը ուսմանց և արհեստի հետեւող, իսկ 3ը՝ միայն արհեստի հետեւող)։ |
| 1903ին՝ | 11 | (10ը՝ Ուսումն. բաժնէն, 1ը՝ ուսմանց և միանգամայն արհեստի հետեւող)։ |
| 1904ին՝ | 18 | (*) (17ը՝ Ուսումն. բաժնէն, 1ը՝ » » » արհեստի հետեւող)։ |
| 1905ին՝ | 19 | (15ը՝ Ուսումն. բաժնէն, 3ը՝ » » » արհեստի հետեւող, իսկ 1ը՝ Արհեստանոցէն)։ |
| 1906ին՝ | 15 | (14ը՝ Ուսումն. բաժնէն, 1ը՝ Արհեստանոցէն)։ |
| Գումար | 79 | 67ը՝ Ուսումն. բաժնէն, 7ը՝ Ուսմանց և արհեստի հետեւող, 5ը՝ միայն արհեստի հետեւող։ |
| | 1 | Օրիորդ |
| | 80 | շրջանաւարտ։ |
| 1891-1901՝ | 110 | » (Տե՛ս քսանամեայ Տեղեկագիր, էջ 63)։ |
| | 190 | Համագումար։ |

(*) Ասոնցմէ երկուքը 1903—4 տարեշրջանի Ա. կիսամեակին վերջերը մեկնած էին վարժարանէն և ինչ ինչ պատճառներով քանի մ'ամիս միայն չէին հետեւած իրենց ուսմանց ընթացքին. 1906ին Ուսուցչական Մանկավարժէն վկայականի արժանի նկատուեցան։



Թ.

# ՏՕՆԵՐ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Տարեդարձ **ՎԵՀԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԻ** Ծննդեան եւ Գահակալութեան.— Վարժարանը սոյն հնգամեայ շրջանին մէջ եւս ամէն տարի Վեհափառ Սուլթանին Ծննդեան և Գահակալութեան տարեդարձները կատարեց արժանավայել հանդիսաւորութեամբ։

Նոյն օրերու մէջ վարժարանին աշակերտաց արձակուրդ տրուեցաւ։

1903ին Վեհ. Կայսեր նոյն տարեդարձներուն առթիւ, Վսեմ. Կուսակալի կողմէ տրուած հրաւէրներու միջոցին, վարժարանի չութակահարներէն և դաշնակահարներէն մի քանին չութակի և դաշնակի վրայ զանազան գեղեցիկ եղանակներ ածեցին՝ առաջնորդութեամբ չութակահարութեան ուսուցիչ Պ. Գ. Ղայինեանի։ Նորին վսեմութիւնն իր գոհունակութիւնը քանիցս բերանացի յայտնելէ յետոյ, ուղելով աւելի շօշափելի կերպով արտայայտել զայն, նուիրեց 5 ժամացոյց, որոնցմէ 1ը ոսկեայ՝ Պ. Գ. Ղայինեանի, իսկ 4ը արծաթեայ՝ չութակահար աշակերտներէն Պ. Պ. Արմենակ Մատաթեանի, Խորէն Զիթճեանի, Պօղոս Պալեօզեանի և դաշնակահար Պ. Օննիկ Տ. Պօղոսեանի, ամէնքն ալ ապա ընթացաւարտ։

Ներկայացումներ եւ նուագահանդէսներ.— 1902—1906 տարիներու մէջ, ըստ սովորութեան, կատարուեցան դպրոցական պարզ հանդէսներ՝ Կաղանդի, Ս. Ծննդեան, Բարեկենդանի և Զատկի առթիւ։

Կաղանդի գիշերը աշակերտաց կը տրուի մրգեղէններու և անուշեղէններու ճոխ սեղան մը։ Ներկայ կը լինին օրուան Առաջնորդ Ս. Հայրը և վարժարանին պաշտօնէութիւնն եւս։ Ի դիմաց աշակերտաց 1—2 հոգի կ'արտասանեն երախտագիտական ուղերձներ, որոնց կը պատասխանէ Տեսչութեան անդամներէն մին։

Այդ սեղանէն յետոյ վարժարանին թատերասրահին մէջ տեղի կ'ունենան արտասանութիւններ, նուագածութիւն և կը ներկայացուի վարժա-

րանին վաղամեռիկ բանաստեղծ-ուսուցիչ Կորիւն Մկրտիչեանի «Նոր Տարի»ն որուն թողած տպաւորութիւնը խիստ մեծ է։

Ս. Ծննդեան, ինչպէս նաև Ս. Զատկի ճրագալոյցի ժամերգութենէն յետոյ, որուն Առաջնորդը կամ Առաջն. Փոխանորդը կը կատարէ տնօրհնէքի հանդէսը, ի ներկայութեան վարժարանին Հոգաբարձութեան, պաշտօնէութեան, Կարներնակ Նախկին սաներուն, աշակերտաց և այլոց։

Աշակերտները ներդաշնակօրէն կ'երգեն «Խորհուրդ մեծ» շարականը կամ «Այսօր յարեաւ»ը։

1904-2ին տեղի ունեցած երկրաշարժին պատճառաւ, կարելի չեղաւ թատերական ներկայացումներ կազմակերպել։ Նոյն տարւոյ վերջերը Շաբաթ իրիկունները, դպրոցական պարզ նուագահանդէսներ տրուեցան։

1902 տարւոյ օգոստոսին, քանի մը ուսուցիչներէ կազմուած մասնախումբի մը ջանքերուն շնորհիւ, սարքուեցաւ նաւասարդի առաջին օրուան յատուկ զուարճալի և զբօսեցուցիչ հանդէս մը, որուն կարգացոյցը կը կազմէին ցատկել, վազել, ըմբշամարտ, լողալ, մարմնական զանազան կրթութիւնք, երգել ևայլն։ Մրցման մասնակցող յաջողակ աշակերտներուն իբրև մրցանակ տրուեցան գրիչներ, կաղամար, կողմնացոյցներ, ծոցատետրեր, գմելիներ, խոշորացոյց ևայլն։ Այս հանդէսն, որ այնչափ ոգևորեց բոլոր ներկաները, վերջացաւ գաւառական պարերով։ Նման հանդէս մը սարքուեցաւ նաև 1906ի օգոստոսին։

1903ի Կաղանդին գիշերը ներկայացուեցաւ «Les Martins pêcheurs» թատերախաղը, ի ներկայութեան Առաջնորդ Տ. Զաւէն Ս. Հօր, վարժարանին պաշտօնէից, մի քանի հիւրերու և աշակերտաց։

1904 Փետր. 3ին Հայերէն «Վայրենի» և Թուրքերէն «Տէլի-պաշ» (Ֆրանսերէնէ թարգմանուած ի ձեռն Պ. Մանուէլ Տէտէեանի, ընթացաւարտ վարժարանին), իսկ Փետր. 4ին «L'avocat patelin» անուն թատերախաղերն ներկայացուեցան՝ միևնոյն շրջանակին մէջ։

1905 Յունվ. 6ին աշակերտներն ունկնդրեցին Կուսակալ Նազըմ Փաշայէն ուղարկուած կրամոֆոնի եղանակներուն։ Նոյն իրիկունը մոգական լապտերով ներկայացումներ ևս տրուեցան։

1906ի Բուն-բարեկենդանի շաբթուն ներկայացուեցան Յ. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ»ը և «Խեչոյի թուղ»ը՝ վարժարանին պաշտօնեաներուն, աշակերտներուն և երկսեռ բազմութեան մը ներկայութեան։



Ինչպէս միշտ, նոյնպէս և այս ներկայացումներուն ժամանակ, դերակատարներն էին վարժարանին աշակերտները, որոնք բաւական յաջողակութիւն ցոյց տուին և ծափեր խլեցին հանդիսականներէն։

Միջնարարներու ժամանակ, վարժարանին ջութակահարներու խումբը դաշնակահարի մը ընկերակցութեամբ, երաժշտական գեղեցիկ կտորներ կ'ածէին։

Հոգեհանգիստներ.— 1901-1906 տարիներու մէջ ևս, ըստ սովորութեան, Մայիս 19ին, Հոգելոյս-Հիմնադրին մահուան տարելիցի օրը, Կարնոյ Մայր Եկեղեցւոյ մէջ յատկապէս Ս. Պատարագ մատուցուելէ յետոյ, վարժարանին գաւթին մէջ, ուր կը կանգնի Բարերարին մարմարեայ կիսանդրին, հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ վարժարանին Հոգաբարձուներուն, պաշտօնեաներուն, հին ու նոր աշակերտաց և խուռն բազմութեան մը ներկայութեան։ Նոյն օրը Բարերարին կիսանդրին բնական և արուեստական ծաղկեպսակներով կը զարդարուի։

1905 Մայիս 19ին վարժարանին աշակերտներն, առաջնորդութեամբ Պ Գ. Ղոյլնեանի, մասնակցեցան նոյն օրուան Ս. Պատարագի եռաձայն երգեցողութիւններուն, որոնք խիստ լաւ տպաւորութիւն թողուցին ունկնդիր ժողովրդեան վրայ։

1906 Մայիս 31ին վարժարանին կտակակատար և կտակարար Կարապետ Եղեանցի մահուան առաջին տարելիցն ըլլալով՝ Ս. Պատարագէն յետոյ, յատկապէս հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ։

1894էն ի վեր ամէն տարի, Նոյեմբեր 1ին, ըստ սովորութեան, հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կ. Եղեանցի մօրաքոյր և Սանասարեան վարժարանին կարեւոր գումար մը կտակող Մարիամ Մարտիրոսեան Կաղաչկեանցի մահուան տարեդարձին առթիւ։

1903 Յունիս 23ին առանձին և անկէ յետոյ, ամէն տարի Նոյեմբեր 1ին, Ս. Պատարագէն վերջը հոգեհանգստեան պաշտօն կատարուած է նաև յանուն Առաքել Ծատուրեանի, որ 1897ին 12000 ռուբլի նուիրած էր վարժարանին։

1904 Նոյեմ. 1էն ի վեր, այսպէս միասին կը կատարուին Կաղաչկեանցի և Ծատուրեանի հոգեհանգստեան պաշտամունքն։

Ս. Զատկի Բ. օրը կ'օրհնուին գերեզմանները վարժարանին ողբացեալ ուսուցիչներուն՝ Պօղոս Դերվիշեանի, Կորիւն Մկրտիչեանի և Միսաք Ֆէթվաճեանի, ինչպէս նաև վաղամեռիկ աշակերտաց։

Վարժարանին 1901-1906ի տարեշրջաններու ընթացաւարտներն եւս, ի նշան իրենց խորին երախտագիտութեան, Ս. Պատարագ և հոգեհանգստի պաշտօն մատուցանել տուին Բարերարին հոգւոյն համար։

Վկայականներու բաշխում. — 1901-1906 տարիներու մէջ միա՛յն 1903ին վկայականաց բաշխումը հանդիսաւորապէս տեղի ունեցած է։ Թէև, ինչպէս յիշուեցաւ քանիցս, մնացեալ տարիներուն մէջ եւս վարժարանն միշտ ընթացաւարտ ունեցած է, սակայն ինչ ինչ նկատումներով, հարկ չէ դատուած հանդէս կազմակերպել։

1903 Յուլիս 3ին արտակարգ հանդիսաւորութեամբ տեղի ունեցաւ 1902-1903 տարեշրջանի ընթացաւարտներուն վկայականաց բաշխումը։



## Ժ.

## ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Գրադարան. — 1901—1903 տարիներու մէջ գրադարանապետութեան պաշտօնը վարեց Պ. Գ. Ճէյէրճեան, որուն մեծապէս օգնեցին Պ. Պ. Փափազեան եւ Հրաչեայ Լուսպարոնեան։

1903—1905 նոյն պաշտօնը վարեց Պ. Մանուէլ Տէտէեան։ 1904—1905 վարժարանական տարւոյ վերջերը Պ. Խորէն Չիթճեան ստանձնեց նոյն պաշտօնը, զոր շարունակեց մինչեւ 1906 Փետր. 27։ Անկէ յետոյ Պ. Սիմոն Աղապալեանի յանձնուեցաւ գրադարանապետութիւնը։

Եղած գրենական նուիրատուութիւններէն զատ, Գրադարանը՝ 1901-1906 տարիներու մէջ՝ գնմամբ ստացած է բազմաթիւ գրքեր և դասագրքեր՝ Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն եւ Գերմաներէն լեզուներով, մանկավարժական եւ երաժշտական հանդէսներ եւյլն։

Գրադարանը 1906 Օգոստոս 31ին ունէր աւելի քան 6000 հատոր գիրք եւ դասագիրք 95918 ղրշ. արժէքով։

1903ին այրեցեալ Բեդերսպուրկի մէջ պահուած վարժարանին սեփական 4348 հատոր ընտիր գրքերն ու ձեռագիրներն, որոնք ապահովագրուած էին։

Թանգարան. — Թանգարանը ունի բնական եւ բնապատմական գիտութեանց, աշխարհագրական, պատմական, երկրաչափական, եւ այլ ուսմանց վերաբերեալ ճոխ ու ընտիր հաւաքածոներ, ինչպէս նաեւ 78 կտոր Հայերէն եւ 1 կտոր Վրացերէն ձեռագիր, հնութիւններ եւայլն։ Թանգարանապետութեան պաշտօնը վարեց Պ. Յ. Մատթեան վերջին հնգամեայ շրջանին մէջ եւս։

1901—1906 Թանգարանին առարկաներուն վրայ գնմամբ և նուիրմամբ փոքրիկ յաւելումներ միայն եղած են։

1904—1905ին վարժարանին աշակերտներէն Պ. Սարգիս Խաչատրեան (ապա ընթացաւարտ) Կ. Եղիանցի մահուան առիթով գծեց ու վարժարանին նուիրեց անոր իւղանկար պատկերը։

1905—1906ին գնուեցաւ լուսանկարչական մեքենայի կազմած մ՚եւս։

Երաժշտարան. — 1901—1902ին Եւրոպայէն բերել տրուեցան

*նուագախումբի յատուկ 10 գործիքներ։ 1902—1903 ին գնուեցան մէկ, զոյգ ծնծղայ եւ թմբուկ մը։*

*Պարտէզ. — 1904—1906 Վարժարանին աշակերտներն առաջնորդութեամբ Պ. Ց. Մատթէոսեանի, առնն առնն զբաղեցան պարտիզպանական աշխատութիւններով։*

## ՑՈՒՑԱԿՆԵՐ

*Հոս կը դնենք Թանգարանին գոյքերուն մէկ ամփոփ ցանկը (ցուցակ ԺԱ.) եւ 1901 Սեպտ. 1—1906 Օգոստ. 31 արձանագրուած ձեռագիրներուն ցուցակը (ցուցակ ԺԲ.)։*



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ - ՆՈՐ ՇԷՆՔ

Պողոտայի ու Պարտէզի կողմերն։

## ԺԲ. ՑՈՒՑԱԿ

### 1906 ՕԳՈՍՏՈՍ 31 ԻՆ

Թանգարանն ունի մեծադիր 12 եւ փոքրադիր 1 պահարան՝ ապակեայ փեղկերով՝ որոնք կը պարունակեն զանազան առարկաներ հետեւեալ կերպով.

**Ա. Պահարան.** — Կմախք, խուաքարտեայ մարդ՝ գործարաններով, զմռսեալ իրական գլուխ, թեւ, սիրտ, ոտք, արհեստական ականջ, աչք. մորթային հատուած, սիրտ, ուղեղ բնական եւ զանեայ գանկեր, մարդկային ցեղերու կիսարձանիկներ, Եգիպտական մումեայ գլուխ, համագումար 46 կտոր։

**Բ. Գ. Դ. Ե. Զ. եւ Է. Պահարան.** — 230 հատ զմռսեալ մեծ ու փոքր զանազան թռչուններ եւ այլ ողնաւոր կենդանիներ (1901-ի երկրաշարժէն 5 հատ կոտրած, ոչնչացած)։

**Ը. Պահարան.** — 214 շիշ ալքոլի մէջ այլ եւ այլ կենդանիներ, 14 շիշ մանր խեցիներ եւ 2 հատ զմռսեալ թռչուն։

**Թ. Պահարան.** — Զինական առարկաներ, հնութիւններ, քարէ պտուղներ, խեցիներ, այլ եւ այլք, 15 կաթնասունի կմախք եւ գանկ։

**Ժ. Պահարան.** — Հնդկաստանի արտադրութիւններ (համեմներու նմոյշներ), մամութի քարացած ոսկորներ, այլ եւ այլ քարեր, հանքերու տեսակներ, ընդամէնը 197 կտոր (1901 ի երկրաշարժէն 12 կտոր կոտրած ոչնչացած)։

**ԺԱ. Պահարան.** — Բոյսեր, զանային խեցեմորթներու ձեւեր, փափկամարմիններու յախճապակեայ ձեւեր, շալանէրու հաւաքածոյ, սպունգ եւլն. 214 կտոր (մասամբ փճացած)։

**ԺԲ. Պահարան.** — Երկրագունդ, արեւի եւ լուսնոյ շարժացոյց, երկրաչափական ձեւեր եւլն. ընդամէնը 87 կտոր, 1 սնտուկ եռանկիւնաչափական ձեւեր, խուաքարտէ շինուած բիւրեղագրական ձեւեր։

**ԺԳ. Պահարան.** — Փղոսկրեայ զանազան արժէքաւոր առարկաներ (Ճարոնական) հնութիւններ, ընդամէնը 32 կտոր։ Այս պահարանին մէջ ի պահ կը մնան նաեւ վարժարանին 78 կտոր ձեռագիրները։

Պահարաններէ դուրս կան նաեւ զմռսեալ այլ կենդանիներ եւ առարկաներ։ Վարժարանին դրամարկղին մէջ ի պահ կը մնան 6 հատ ոսկի, 86 հատ արծաթ եւ 395 հատ պղինձ, ընդամէնը 487 հին դրամներ,(*) եւ չորս հատ փորուած մատնեքար (gemma)։

Բնագիտական եւ տարրաբանական աշխատանոցին մէջ կան նոյն ճիւղին վերաբերեալ գործիներ եւ քիմիական նիւթեր։

Վարժարանն ունի նաեւ Մեծն Աղեքսանդրի մարմարեայ կիսարձանը եւ բազմաթիւ ծաղկեպսակներ։ Կան նաեւ հետեւեալ իւղանկարները. —

1 հատ Օսմանեան ԹՈՒՂՐԱՅԻ ՀԻՒՄԱՅՈՒՆ.
1 » Եսթեր մեծ դիրքով (Լամի).
1 » Հոլանտացի այր ու կին (Ռիւպէնս)
1 » Կ. Պոլսոյ Սուլթան Ահմէտի մզկիթը (Այվազովսքի).
1 » Կալիլէ.
1 » Պօղոս Պետրոս, մանրանկար.

---

(*) Ասոնցմէ զատ կան նաեւ ի Կ. Պոլիս 56 կտոր հին դրամներ ոսկի, արծաթ եւ պղինձ, ինչպէս նաեւ Շամիրամայ քարէ կիսադէմք մը։

1 հատ Արեւելուհի.
1 » Պտուղներ (Կարաճչի)·
1 » Ամերիկայի գիւտը՝ իւղատիպ (Այվազովսքի)·
1 » Կալիլէի դատաստանը.
1 » Տեսարան Խրիմէն (Օռլօֆ)
1 » Ծովանկար (Այվազովսքի)·
1 » Ծովանկար (Առլովսքի).
1 » Տփղիսի կեանքէն (Ներսէսեան)·
1 » Գոլոմպոս փոթորիկի բռնուած, իւղատիպ (Այվազովսքի)·
1 » Կղէոպատրա (Ռիւպէնս).
1 » Դղեակ (Վէրէշչագին).
1 » Չէրքէզ՝ իր ձիով,
1 » Աբրահամ եւ Սառա (Բուսէն)
1 » Վարժարանին Հիմնադիր Բարեբարը։
1 » Կոմսակատար Կ· Եզեանցը.
1 » Ջկնորս.
1 » Ս. Մեսրոպի մեծադիր լուսանկար·

Ասոնցմէ զատ կան նաեւ 19 հատ մեծադիր լուսանկարներ եւ նկարներ (ԸՆԹԱՑԱԻԱՐՏՆԵՐՈՒ ԽՄԲԱՆԿԱՐՆԵՐ եւյլն.)։

# ԺԳ. Ցուցակ

## 1906 ՕԳՈՍՏՈՍ 31ԻՆ

| ԿԱՐԳ | ՁԵՌԱԳՐԻ ԱՆՈՒՆ | ԹՈՒԱԿԱՆ | ԹԵՐԹ | ՆԻՒԹ | ԳԻՐ | ԳՐԻՉ | ՏԵՂԻՆ. ՈՒՐ ԳՐՈՒԱԾԷ | ՆՈՒԻՐԱՏՈՒ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1-66 | Կոտր ձեռագրի մանրամասնութիւն տես Բանամեայ տեղեկագիր Սանասարեան վարժարանի երես 72 — 75 | | | | | | | |
| 67 | Սաղմոս Դաւթի | ? | 252 | բամպակեայ թուղթ | տպագիր (նոր) | ? | ? | Ս. Խաչատրեան |
| 68 | Վրացերէն Աւետարան | ? | 267 | Նուրբ մագաղաթ | հին վրացերէն | ? | ? | Մ. Անթուան |
| 69 | Բացատրութ. երկու ծածկգր. յիշատակարանաց | Տպգրբ. Կ. Պոլիս 1880 Ընդօրինկր. թվն. ? | 32 | հաբկ. թուղթ գծուր. | նոր երկաթագիր | ? | ? | Ն. Գէորգեան |
| 70 | Բժիշկանութիւն | ? | 125 | » » անգիծ | նոտրագիր | ? | ? | — |
| 71 | Գուշակութիւնք ևն. | ? | 235 | » » » | » | ? | ? | |
| 72 | Տոմարական գիտելիք | ? | 66 | Նուրբ մագաղաթ | մանր տպագիր | ? | ? | Մ. Անթառամեան |
| 73 | Եփրեմ խուրինՅովհ.Երզնկացի ևն. | ? | 131 | հասարակ թուղթ | նոտրագիր | ? | ? | Ս. Խաչատրեան |
| 74 | Տլրամի տետրակ | ? | 10 | » » | նոր երկաթագիր | Տ. Աբրահամ | ? | |
| 75 | Սաղմոս (պակասաւոր) | ? | 130 | բամպակեայ թուղթ | » » | ? | ? | Ս. Խաչատրեան |
| 76 | Շարական » | ? | 391 | » » | մանր տպագիր | ? | ? | » |
| 77 | Շարական » | ? | 274 | » » | » » | ? | ? | » |
| 78 | Գիրք տոմրց. Հյց. և Հռովմայեցւոց | ՌՄԾԲ=1803 | 225 | » » | նոտրագիր | Թութակից Ազարիայի որդի Մարտիրոս | Մելիտինէ | » |

## ԺԱ.

# ՀԱՍՈՅԹՆԵՐ ՈՒ ԾԱԽՔԵՐ

## Ա. ՀԱՍՈՅԹՆԵՐ

Ինչպէս կ՚երեւի Հնգամեայ հասոյթներու եւ ծախքերու ընդհանուր հաշուեցոյցէն, վարժարանին նիւթական մատակարարութեան միջոցները եղած են. —

1. — Արժեթղթոց տոկոսները.
2. — Կալուածական հասոյթներ.
3. — Աշակերտաց թոշակները.
4. — Երաժշտարանի հասոյթները.
5. — Կաղմատան հասոյթը.
6. — Արհեստանոցի հասոյթը.
7. — Արտակարգ հասոյթներ։

Հարկ կը համարինք իւրաքանչիւր հասոյթի մասին տալ քանի մը ամփոփ տեղեկութիւններ։

1. Արժեթղթոց տոկոսներ.— Բարերարին՝ իր վարժարանին համար թողուցած դրամագլուխը, կալուածներու գնման յատկացեալ մասէն զատ, ըստ կտակին արժեթղթոց վերածուելէ յետոյ, ի պահ դրուած է Ռուսիոյ Պետական դրամատունը։

Այդ արժեթղթոց տոկոսներէն Խնամակալութիւնը կը վճարէր՝ իբրեւ սովորական նպաստ՝ տարեկան ըստ առաջնոյն 1200 Օսմ. լիրա. (Լ. Օ. 103 էն 123600 ղրշ.) որ միւս եկամուտներուն հետ բնականաբար չէր բաւեր վարժարանին ծախքերուն. ուստի եւ ամէն տարի՝ արտասովոր նպաստ անունով կը վճարէր նաեւ գումար մը տարեկան բացը գոցելու համար, ինչ որ՝ մերձաւորապէս կը նախատեսուէր նաեւ վաւերացուած ելմտացոյցով։

Ըստ այսմ, այն հնգամեայ շրջանին մէջ մատակարարութեան համար, վարժարանին դրամագլուխին եկամուտէն տրուած է.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Օսմ. Լիրան | 103էն | 618000 | ղրշ. | իբր | սովորական նպաստ |
| » | » | » | $399145\frac{3}{4}$ | » | » արտասովոր նպաստ |
| Հանգումար. | » | » | $1017145\frac{3}{4}$ | » | |



Վարժարանին 1892 ի Հիմնական կանոնագրութեան համաձայն, ելմտացոյցով նախատեսուած ծախքերը վճարուելէ յետոյ, աւելցած դրամով կազմուած է պահեստի դրամագլուխ մը, զոր միայն Խնամակալութիւնը կարող է ծախսել Վարժարանին արտակարգ պէտքերուն համար։

Պահեստի դրամագլուխն ալ, որ նոյնպէս արժեթղթերու վերածուած է, ի պահ կը մնայ Ռուսիոյ Պետական դրամատան մէջ։

(Արժեթղթոց մասին աւելի մանրամասն տեղեկութիւն տրուած է Քսանամեայ Տեղեկագրին մէջ. Տե՛ս էջ 76—77)։

2. Կալուածական հասոյթներ.—Ասոնց մասին խօսուած է «Վարժարանին Կալուածները» գլուխին մէջ։

3. Աշակերտաց թոշակներ.— 1901—1906 տարիներու թոշակաց վրայ ո՛ր եւ է փոփոխութիւն չեղաւ։

Գիշերօթիկ լիաթոշակները կը վճարէին 20 Լիրա տարեթոշակ՝ ամէն ծախք Վարժարանին վրայ ըլլալու պայմանաւ։ Կային նաեւ այնպիսի գիշերօթիկ թոշակաւորներ, որոնք կը վճարէին 12 լիրա տարեթոշակ եւ իրենց ծնողքը կը հոգային անկողնոյ, մահճակալի, հագուստի, դասագրքերու եւ դպրոցական այլ պէտքերու, ինչպէս նաեւ դեղերու ծախքերը։ Լիաթոշակ աշակերտները թոշակէ զատ կը վճարէին նաեւ 3 լիրա, իբրեւ մուտք՝ միանուագ։ Գիշերօթիկ թոշակաւոր մը տարեկան արձակուրդին վարժարանին մէջ մնացած պարագային, կը վճարէր 1 լիրա, իբրեւ արձակուրդի տուրք։ Այս գլխոյ ներքեւ արձանագրուած են նաեւ աշակերտաց հին թոշակներու հաշուոյն գանձուած գումարները։

1901—1906 վարժարանական հինգ տարիներու մէջ, այս գլուխէն ամենէն շատ մուտք գոյացած է 1901—1902 ին, յորում գանձուած է 201571 ղրշ.։ Այս գումարը 1905—1906 ին իջած էր 62727 ղրշ. ի պաշտպանեալ սաներուն նպաստը բոլորովին դադրելուն պատճառաւ։

Հնգամեայ մուտքն է $549198\frac{1}{2}$ ղրշ.։

4. Երաժշտարանի հասոյթներ.— Գործնական երաժշտութեան համար, տարեկան 3 լիրա կը գանձուէր դաշնակի կամ ջութակի հետեւողէն։ Նուագածութեան հետեւողներէն տուրք առնուած չէ։ Այս գլխոյ ներքեւ արձանագրուած են նաեւ վաճառեալ ջութակներու արժէքները եւ վարձուած դաշնակներու վարձքերը։ Երաժշտարանի հնգամեայ մուտքն է 11054 ղրշ.։

5. Կազմատունը միայն 1901—1902 ին 103 ղրուշ մուտք ունեցած է։

6. Արհեստանոցը այն հնգամեայ շրջանին մէջ թոշակաւոր աշակերտ չէ ունեցած։ Մուտքի համագումարն եղած է 35007$^{1}/_{4}$ ղրուշ, արժէք կանխիկ վաճառեալ կահագործական և կողպարարական ապրանքներու, նախորդ տարիներէն աւելցած և յաջորդ տարիներուն վաճառուած առարկաներու և քիմիական նիւթերու։

7. Արտակարգ. — Իբրեւ արտակարգ մուտք արձանագրուած են Ալիանս Ֆրանսէզի Կ. Պոլսոյ մասնաճիւղէն՝ Խնամակալութեան դիմումին վրայ՝ վճարուած տարեկան նուէրը, որ 1901—1902 ին՝ 22 լիրաէր, 1902—1903 ին, 1903—1904 ին եւ 1904—1905 ին՝ 40 ական լիրա, իսկ 1905—1906 ին 25. Փոխանակագին՝ ծախուած փոխանակագրերու, արժէք՝ վաճառուած քարիւղի, թեփի, հացի եւ այլ ուտելիքի, դրքի, հնոտիներու, հին պղնձեղէններու, դեղերու եյլն. եյլն.ի։

1901—1905 տարիներու մէջ, վարժարանական տարեխակներուն աւելցած սպառելի նիւթերն նոյն տարիներու մէջ մուտք արձանագրուած են, իսկ յաջորդ տարիներու մէջ՝ ելք։ 1905—1906 ի տարեխակին, լաւագոյն համարուած է աւելցած սպառելի նիւթերուն արժէքներն զեղչել ելքի կողմէն և յաջորդ տարուան մէջ մուտք ու ելք արձանագրել։ Այս վերջին դրութեամբ նշանակուած ելքերը ցոյց կուտան բո՛ւն իսկ սպառածները։ Այս պատճառաւ 1905—1906 տարուոյ Արտակարգ՝ գլխոյ Բ. ստորաբաժանման մուտքն բաղդատաբար նախորդ տարիներու նոյն ստորաբաժանման՝ զգալաբար պակաս նշանակուած է։

---

### Բ. ԾԱԽՔԵՐ

Վարժարանին ծախքերը 1901—1905 տարիներու մէջ տեղի ունեցած են Կ. Պոլսոյ Խնամակալութեան եւ Կառավարիչ Պ. Եղեանցի վաւերացման ու հաւանութեան ենթարկուած ելմտացոյցներուն համաձայն։ Իսկ Կառավարիչին մահուանէն յետոյ՝ 1905—1906 տարեշրջանէն սկսեալ, ելմտացոյցը՝ որ ըստ առաջնոյն կը պատրաստուի Կարնոյ Հոգաբարձութենէն, կը վաւերացուի նոյն Խնամակալութենէն եւ ապա գործադրութեան կը դրուի։



ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ՍՐՏԱՋՈՐ

## ԺԳ.

# ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐ ԵՒ ՆՈՒԷՐՆԵՐ

Շնորհակալութեամբ կը յիշատակուին հնգամեայ շրջանի մէջ վարժարանին եղած նուիրատուութիւններէն հետեւեալներն եւս.— Կարնոյ Առաջնորդ (նախորդ) Տ. Զաւէն Ծ. վրդ. Տ. Եղիայեան՝ մէկ տարեկան «Լոյս» կրօնաթերթէն։

Վարժարանիս ուսուցիչներէն Պ. Դաւիթ Ոսկիկեան 11 կտոր կենդանաբանական գունաւոր տախտակներ և 1 օրինակ բնաբանութիւն (ֆր.)ի.

Ալլիանս Ֆրանսէզ 4 հատոր պատմական և աշխարհագրական փառակազմ գրքեր։

Վարժարանիս ուսուցիչներէն Պ. Սիմոն Աղապալեան Brock Hause-Գերմաններէն համայնագիտական, պատկերազարդ 17 հատորները։

Վարժարանիս քարտուղար-հաշուապահ Պ. Արսէն Աւետիքեան՝ «Բիւզանդիոն»ի 3 տարուան և «Արեւելք»ի 2 տարուան հաւաքածոները։

Նոյնպէս վարժարանին նուիրուած են զանազաններէ արծաթ և պղինձ հին դրամներ, գրքեր, պարբերական հանդէսներ, լուսանկարներ, ելն. որոնց համար ազնիւ նուիրատուներուն սրտագին շնորհակալութիւն կը յայտնուի յանուն վարժարանին։

## ԺԹ.

## ԱՒԱՆԴ ԴՐԱՄ

*Վարժարանն ընդունուող գիշերօթիկ աշակերտներէն իբրեւ պահեստի դրամ կ'առնուի 3 Օսմ. լիրա, որ ետ կը տրուի աշակերտին, երբ նա վերջնապէս կը մեկնի վարժարանէն, ընթացաւարտ ըլլայ կամ ոչ։*

*Վարժարանին կօշկակարէն և ջուլթակի մը գործածութեան համար անհատէ մը՝ իբրեւ երաշխագին առնուած է 21½ Օսմ. լիրա։*

*Հոս կը դնենք աւանդ դրամոց հնգամեայ հաշուեցոյցը։*

Հաշուեցոյց Աւանդ դրամոց, Օսմ. Լիրան 103 էն

| ՏԱՐԵՇՐՋԱՆ | ՏԱՆՕԹՈՒԹԻՒՆ | ԸՆԴՈՒՆՈՒԱԾ | | ԵՏ ՏՐՈՒԱԾ | | ՊԱՀ ՄՆԱՑԱԾ ՕԳՈՍՏ. 31 ԻՆ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1901—1902 | Աւանդ եւ երաշխագին | 3753 | 50 | 1075 | 50 | 2678 | — |
| 1902—1903 | » » » | 2678 | — | 309 | — | 2369 | — |
| 1903—1904 | » » » | 2678 | — | 309 | — | 2369 | — |
| 1904—1905 | » » » | 2369 | — | — | — | 2369 | — |
| 1905—1906 | » » » | 4670 | 50 | 206 | — | 4464 | 50 |

*Ըստ այսմ* 1906 *Օգոստոս* 31*էն ի պահ կը մնայ Օսմ. Լիրան* 103*էն* 4464½ *ղրշ.*

# Բաղդատական հաշուեցոյց Սանասարեան Վարժարանի

## ՆԵՐՔԻՆ ՀԱՍՈՒԹԻՑ ԵՒ ԲԱՐԵՐԱՐԷՆ ՍԱՀՄԱՆԵԱԼ ՆՊԱՍՏԻՑ ՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՈՒՑ

## 1901 — 1902 է 1905 — 1906

*Օսմանեան Լիրան 103 ղրուշէն*

**ՀԱՍՈՅԹՔ** | **ԾԱԽՔ**

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1901 – 1902 | Աշակերտներէ, Երաժշտարանէ, Արհեստանոցէ, Ջանազաններէ՝ | 224511 | 75 | | | 1901—1902 | Վարժարանին տարեկան ընդհանուր ծախքն | 448504 | — | | |
| 1902 – 1903 | » » » » | 121946 | 50 | | | 1902—1903 | » » » » | 342872 | 25 | | |
| 1903 – 1904 | » » » » | 132003 | 75 | | | 1903—1904 | » » » » | 321119 | — | | |
| 1904 – 1905 | » » » » | 130638 | — | | (*) | 1904—1905 | » » » » | 311118 | 75 | | |
| 1905—1906 | » » » » | 78843 | 50 | 687943 | 50 | 1905—1906 | » » » » | 291260 | 25 | 1714874 | 25 |
| 1901—1906 | Հիմնադիր բարերարէն հնգամեայ մատակարարութեան հաշւոյն վճարուած | | | | | | | | | | |
| | 1. Կտակեալ արժէթղթոց տոկոսներէն | 618000 | — | | | | | | | | |
| | 2. » պահեստի գումարներէն | 399145 | 75 | | | | | | | | |
| | 3. » կալուածական հասոյթներէն | 9785 | — | 1026930 | 75 | | | | | | |
| | Համագումար | | | 1714874 | 25 | | Համագումար | | | 1714874 | 25 |

Կարին 10 Օգոստոս 1907

Վասն ճշդութեան
Ի դիմաց Հոգաբարձութեան
Փոխ-Վերատեսուչ Սանաս. Վրժ.ի
ԳԷՈՐԳ ԱԲՈՒԼԵԱՆ

Առաջն. Փոխանորդ Կարնոյ և Նախագահ
Հոգաբարձութեան Սանասարեան Վարժարանի
ՆԵՐՍԷՍ Ա. ՔԱՀԱՆԱՅ ՎԱՀԱՆԵԱՆ

Քարտուղար-Հաշուապահ
ԱՐՍԷՆ ԱՒԵՏԻՔԵԱՆ

(*) Բացի մատակարարութենէ աւելցած 21368½ ղրշ. էն (Լ. Օսմ. 103 էն):

# Հաշուեցոյց Սանասարեան Վարժարանի

## 1901—1902 է 1905—1906

## ՄՈՒՏՔ

*Օսմ. Լիրան 103 ղրուշէն*

| ՀԱՇՈՒԱԿԱՆ ԳԼՈՒԽՆԵՐ | ՏԱՐԵՇՐՋԱՆ / Բացատրութիւններ եւ ծանօթութիւններ | 1901—1902 Գիշ. աշկ. եւ պշտ. 92 Ցերեկ » 47 | | 1902—1903 Գիշ. աշկ. եւ պշտ. 28 Ցերեկ » 60 | | 1903 - 1904 Գիշ. աշկ. եւ պշտ. 28 Ցերեկ » 77 | | 1904—1905 Գիշ. աշկ. եւ պշտ. 28 Ցերեկ » 69 | | 1905—1906 Գիշ. աշկ. 13 Ցերեկ » 73 | | Ընդհանուր գումար Հնգամեայ հասոյթից | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հիմնադիր | Սովորական նպաստ | 123600 | — | 123600 | — | 123600 | — | 123600 | — | 123600 | — | 618000 | — |
| | Արտասովոր » | 99156 | 25 | 95883 | 75 | 65515 | 25 | 55747 | 75 | 82842 | 75 | 399145 | 75 |
| | Աղվերանի մէկ տնէն, քաղաքամիջի եւ Կէզայ արտերէն | 1236 | — | 1442 | — | — | — | 1133 | — | 5974 | — | 9785 | — |
| Աշակերտք | Մուտք, թոշակ, արձակուրդի տուրք եւ հին թոշակ | 201571 | (*) | 86849 | 50 | 102003 | — | 96048 | — | 62727 | — | 549198 | 50 |
| Երաժշտարան | Գործիկն երժշտ. տուրք, չրկի. գին, դաշնակի վարձ | 1545 | — | 515 | — | 2575 | — | 3616 | — | 2803 | — | 11054 | — |
| Կազմատուն | Գրքի կազմողչէք | 103 | — | — | — | — | — | — | — | — | — | 103 | — |
| Արհեստանոց | Վաճառեալ կնզրծկն. եւ կպղրրկն. ապրնք. քիմի. նիւթ | 4959 | 50 | 7231 | 50 | 6997 | 75 | 8590 | 75 | 7227 | 75 | 35007 | 25 |
| Արտակարգ | Ալիհան-Ֆրանսէզի տարեկան նպաստ | 2266 | — | 4120 | — | 4120 | — | 4120 | — | — | — | 14626 | — |
| | Այլեւայլք (վաճառեալ ուտելիք նզուտ. գիրք, քարիւղ եւն.) | 14067 | — | 23230 | 50 | 16308 | — | 18263 | 25 | 6085 | 75 | 77954 | 75 |
| | Գումար | 448504 | — | 342872 | 25 | 321119 | — | 311118 | 75 | 291260 | 25 | 1,714874 | 25 |
| | Մատակարարութենէ աւելցած | — | — | 1178 | 50 | 6290 | 50 | 10961 | 25 | 2938 | 25 | 21368 | 50 |
| | **Համագումար** | **448504** | — | **344050** | **75** | **327409** | **50** | **322080** | — | **294198** | **50** | **1,736242** | **75** |

## ԵԼՔ

| ՀԱՇՈՒԱԿԱՆ ԳԼՈՒԽՆԵՐ | ՏԱՐԵՇՐՋԱՆ / Բացատրութիւններ եւ ծանօթութիւններ | 1901 – 1902 Աշակերտք 170+9(1)=179 | | 1902—1903 Աշակերտք 145+5(1)=150 | | 1903—1904 Աշակերտք 153+7(1)=160 | | 1904—1905 Աշակերտք 133+4(1)=137 | | 1905—1906 Աշակերտք 142+4(1)=146 | | Ընդհանուր գումար Հնգամեայ հասոյթից | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վարժարան | Շէնքի վարձ | 10300 | — | 10300 | — | 10300 | — | 10300 | — | 10300 | — | 51500 | — |
| | Շէնքերու նորոգ. ապհովգր. կահաւորում, պրտէզ. օդփխ. | 9351 | 50 | 5935 | 50 | 7889 | 25 | 11549 | — | 10005 | — | 44730 | 25 |
| Ննջարան | Կահաւորում եւ պահպանութիւն | 3557 | 75 | 250 | 50 | 389 | — | 539 | — | 638 | 75 | 5375 | — |
| Դասարան-Մարզն. | Դասագիրք եւ դպրոցական պիտոյք | 6829 | 50 | 4408 | 75 | 3956 | 50 | 2941 | 25 | 3258 | 75 | 21394 | 75 |
| Ճաշարան-Խոհանոց | Կահաւորում եւ պահպանութիւն | 3527 | 50 | 1553 | 50 | 2430 | 25 | 1780 | 75 | 1703 | — | 10995 | — |
| Կրօնական | Հոգեհանգիստ, ճրագալոյց, տնօրհնէք, եւն. | 833 | 75 | 886 | 50 | 894 | 75 | 914 | 75 | 987 | — | 4516 | 75 |
| Պաշտօնականդիւանին | Դիւանական ծախք, քտղր, հշ.պհի. թոշակ, հիւրսիրթ. | 13880 | 25 | 9260 | 75 | 8936 | 50 | 9058 | 25 | 8609 | 50 | 49745 | 25 |
| Թոշակք պաշտօնէից | Տեսչաց, Ուսուցչաց, կառավարիչներու եւ մշկրրի, | 148320 | — | 139874 | — | 134106 | — | 132664 | — | 124698 | 25 | 679662 | 25 |
| Վարձք սպասաւորաց | Ծառաներուն վարձք, եւն. | 11674 | — | 11737 | 75 | 8836 | 50 | 8663 | 50 | 8215 | 75 | 49127 | 50 |
| Ուտելիք-ըմպելիք | Խոհանոցի ծախք | 107845 | 50 | 87271 | 75 | 78975 | 25 | 78364 | — | 67340 | 25 | 419796 | 75 |
| Զգեստք-կօշիկք | Համդերձեղէնք, ներմակեղէնք, կօշիկք եւ կարկտանք | 27426 | — | 20210 | — | 15272 | 75 | 10222 | 50 | 9486 | 50 | 82617 | 75 |
| Մաքրութիւն | Լուացարարներու, չրկրի. վրսիրայի վարձք, օճառ. | 4102 | 75 | 3030 | 50 | 2976 | 50 | 3093 | 75 | 3327 | 75 | 16531 | 25 |
| Հիւանդանոց | Բժիշկք, ատամնաբոյժ, դեղօրայք | 7100 | 50 | 7076 | 75 | 6770 | — | 3680 | 25 | 3527 | 75 | 28155 | 25 |
| Վառելիք | Փայտ, ածուխ, աքար, վառարան եւն. | 20480 | 50 | 21120 | 50 | 19831 | 50 | 15957 | 25 | 17304 | — | 94693 | 75 |
| Լոյս | Քարիւղ, ձիթաիւղ, մոմ, լամբար, շիշ, եւն. | 4261 | — | 3194 | 50 | 2958 | 50 | 3127 | 50 | 2181 | 75 | 15723 | 25 |
| Գրադարան | Զանազան գրեանք եւ հանդէսք | 2186 | — | 1348 | 50 | 1551 | 25 | 837 | 25 | 862 | — | 6785 | — |
